

of 24 miles

Indemnity of \$2000

891 99

U-75





12 MAR 2011

ԱԶԱՏ ՎԵՏՈՒՆԻ

18

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

37



3426

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1929

0



Ազատ Բշտունի

# СТИХОТВОРЕНИЯ

ՇԱՊԻԿԸ՝ Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական նկարիչ  
Մ. ՍԱՐՅԱՆԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ  
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հր. № 980

Պատվ. № 503

Դրամ. № 2075 (բ) — Տիրամ 2000



## ՅԵՐԳ ԻՄ

Հզոր ու զիւ զըրընգա,  
 Հազարահունչ զանգի պես,  
 Յե՛րգ իմ, յե՛րգ իմ, յե՛րգ իմ վառ,  
 Հազարահունչ զանգի պես.  
 Աշխարհը խո՛ր ե, ժխո՛ր,  
 Ծովածավա՛լ, արեւջա՛ղ.  
 Յե՛րգ իմ, յե՛րգ իմ, զըրընգա՛  
 Հազարահունչ զանգի պես:

Կյանքը գարուն ե հիմի  
 Աղմկահույզ յեւ խնդուն,  
 Յե՛րգ իմ, կանչի՛ր, կարկաչի՛ր,  
 Կանաչիւր վառ՝ հողի պես.  
 Հույզի, սերի, պայքարի  
 Հազար յերգեր են թնդում,  
 Յե՛րգ իմ, յե՛րգ իմ, շեփորի՛ր  
 Աշխարհականչ փողի պես:



Դյութական ե յերկիրն իմ  
Յեվ անսահման յեվ անծիր,  
Յե՛րգ իմ, շաչի՛ր, շառաչի՛ր  
Փոթորկահույզ ծովի պես.  
Ամեն ընկեր ծանոթի  
Հուզի՛ր, ժպտի՛ր յեվ անցի՛ր,  
Յե՛րգ իմ, յե՛րգ իմ, հուրհուրա  
Արեւաշաղ շողի պես:

Կյանքը թնդում ե թափով—  
Պայքար, թռիչք ու ցավեր,  
Յե՛րգ իմ, ծուլվի՛ր աշխարհին  
Յեվ փոթորկվի՛ր հողմի պես.  
Ու դեռ քանի՛ հաղթանակ,  
Քանի՛ ավեր ու դավեր,  
Յե՛րգ իմ, յե՛րգ իմ, ծառացի՛ր—  
Աշխարհի չորս կողմի պես:

Հզոր ու զիւ գրորնգա՛  
Հազարահունչ զանգի պես,  
Յե՛րգ իմ, յե՛րգ իմ, յե՛րգ իմ վառ,  
Հազարահունչ զանգի պես.  
Աշխարհը խո՛ր ե, ժխո՛ր,  
Ծովածավա՛ր, արեւշա՛ղ,  
Յե՛րգ իմ, յե՛րգ իմ, գրորնգա՛  
Հազարահունչ զանգի պես:

1928—Յերևան



## ԱՄԵՆՈՒՐ

Յեղբա՛յր իմ, ամենուր ես.  
Ու միշտ ել քեզ տեսել եմ.  
Ամեն տեղ, ուր ապրում ես—  
Յես ել կամ ու յես ե՛լ եմ...

Թե մտրակը քեզ ծաղկում ե,  
Մարմինըդ պալարվում ե,  
Ցավիցըդ, ո յեղբա՛յր իմ,  
Իմ սիրտն ել զալարվում ե...

Կարծես թե բիրտ մտրակը  
Մարմինս ե վոր խազում ե,  
Կարծես թե իմ վերքիցն ե  
Արյունը, վոր վազում ե...

Կարծես թե հենց այդ յես եմ,  
Հեվում եմ, կարծրանում եմ.  
Կարծես թե հենց այդ յես եմ,  
Ցնցվում եմ, բարձրանում եմ...



Յերբ յեռք ե մարտի յերգըդ,  
Յերբ կանչըդ շեփորում ե,  
Յեվ կամբըդ կապարե կուռ  
Հին կյանքը թե փորում ե,

Կարծես թե իմ հոգին ե,  
Վոր շանթ ե, շառաչում ե.  
Կարծես թե հին աշխարհը  
Զարկիցըս հառաչում ե...

Կարծես թե հենց այդ յես եմ,  
Վոր վառ եմ, վրեժի պես եմ.  
Կարծես թե հենց այդ յես եմ,  
Միլիոն եմ, մեծ ու վես եմ...

Յեղբա՛յր իմ, ամենուր ես.  
Ու միշտ ել քեզ տեսել եմ.  
Ամեն տեղ, ուր ապրում ես—  
Յես ել կամ ու յես ել եմ ..

1921—Թեհրան



## ԴԻԿՏԱՏՈՐ

Լսի՛ր,  
Սինյո՛ր,  
Սի՛ր  
Կամ պարո՛ն,  
Այդ յե՛ս եմ:  
Կուզես հուզվի՛ր հույզերով լուռ.  
Կուզես մազերըդ գզի՛ր զուր.  
Կուզես յերեսըդ հողին քսի՛ր.  
Լսի՛ր,  
Սինյո՛ր,  
Սի՛ր  
Կամ պարո՛ն,  
Այդ յե՛ս եմ...

Հիմի  
Հայացքս հառել եմ հեռվին հուր,  
Հիմի  
Մկաններըս լարել եմ



Յեւ ըռունցքըս՝ պիրկ.  
Հիմի  
Հին հույզերըդ այրում եմ,  
Քայլում եմ դարումը թեժ...

Քայլողը  
Շահ չի՛,  
Սուլթան չի՛,  
Եմիր չի՛,  
Դեմիրը՛,  
Մաշինիստ,  
Հանքափոր բանվոր եմ յես,  
Լսո՞ւմ ես,  
Այդ յե՛ս եմ...

Յե՛ս  
Իվան—Կարոն—Լի-Ջի—Հասանն եմ.  
Յե՛ս  
Ռաբոչի—բանվոր—կուլի—իշչի մասսան եմ.  
Յեւ ամենուր եմ,  
Ուր վոր կաս դու,  
Լսո՞ւմ ես,  
Այդ յե՛ս եմ...

Դարերի համալուին յեկա յես  
Յեւ կամ յես աշխարհի ամեն մասում.  
Լսի՛ր,  
Քե՛զ եմ ասում,  
Հիմի

Հաղթող ու վեհ եմ.  
Հիմի  
Աշխարհի տերը յե՛ս եմ,  
Լսո՞ւմ ես,  
Այդ յե՛ս եմ...

Հոկտեմբերը տեմպեր ե բերել.  
Հոկտեմբերը նոր դար ե կռում.  
Հոկտեմբերը արեւ ե փռում.  
Հոկտեմբերը գոռում ե ուժգին.  
— Հե՛յ,  
Հե՛յ,  
Հե՛յ,  
Փալիս ե  
Ռաբոչի—բանվոր—կուլի—իշչի մասսան.  
Լսի՛ր,  
Սինյո՛ր.  
Սի՛ր  
Կամ պարոն,  
Ջուր ես հուզվում,  
Բացվեն պիտի դռներըդ,  
Կռներըդ կակղեն պիտի.  
Լսո՞ւմ ես,  
Այդ յե՛ս եմ...

Հագինս պարզ շապիկ ե չթից  
Կուռ կուրծքըս—կիսաբաց.  
Կոշիկներըս փռոշտ են դեռ  
Յեւ թնդում են քայլերըս:



Լսո՞ւմ ես,  
Դահլիճդ եմ մտնում ես կոշտ ձեռներով  
Ու փոշոտ.  
Գալարվում,  
Լարվում ես,  
Փարվում ես որերին հին,  
Զո՛ւր,  
Լսի՛ր,  
Սինյո՛ր,  
Սի՛ր,  
Կամ պարո՞ն,  
Այդ յե՛ս եմ...

Յե՛ս  
Իվան — Կարոն — Լի. Չի — Հասանն եմ.  
Յե՛ս  
Ռաբո՛ւլի — Բանվոր — Կուլի — Իշխի մասսան եմ.  
Ջարդում եմ հին թիկնաթուղդ,  
Հիմի  
Յե՛ս եմ դիկտատորը,  
Այսոր իշխողի պես եմ.  
Վոր վաղն իշխողը լինի — հե՛ջ,  
Վոր վաղը  
Թիկնաթուղս ջարդեմ,  
Հարթեմ ուղին նոր կյանքի...

Լսի՛ր,  
Սինյո՛ր,  
Սի՛ր  
Կամ պարո՞ն,

Այդ յե՛ս եմ,  
Կուզես հուզվիր հույզերով լուռ.  
Կուզես մազերըդ գգիր զուր.  
Կուզես յերեսըդ հողին բսիր.  
Լսի՛ր,  
Սինյո՛ր,  
Սի՛ր  
Կամ պարո՞ն,  
Ահա այդ յե՛ս եմ...

1925 — Թիֆլիս





## ՔՍԱՆՎԵՑ ԿՈՄՄՈՒՆԱՐՆԵՐԻՆ

### 1

Ո՞վ կարող է հավերժությունը թաղել.  
Ո՞վ կարող է անմար արևը քաղել...  
Անապատում, թե ծովերում, ցամաքում—  
Արփի շողեր վողջ աշխարհն են համակում...  
Ո՞վ կարող է հավերժությունը թաղել:

Ու սրեցին բյուր դաշույնները հատու,  
Վոր խոցոտեն արևի սիրտը բոցի...  
Դաշույնների հարվածներով մահացու  
Ո՞վ կարող է արևի սիրտը խոցի...

Անապատի ավազներում հողմածեծ՝  
Արևների ցուրերը շեկ են դառնում...  
Այլ արևն եր, վոր անապատը թացեց,  
Յեվ մրրկվող ավազն իրար է խառնում...

### 2

Ո՞վ կարող է հավերժությունը թաղել.  
Ո՞վ կարող է անմար արևը քաղել...  
Անապատում, թե ծովերում, ցամաքում—  
Արփի շողեր վողջ աշխարհն են համակում...  
Ո՞վ կարող է հավերժությունը թաղել...

Այս հուրը, վոր սրտումս կրում եմ,—  
Ձեր ալ ու վառ սրտի հրիցն ե...  
Այս սուրը, վոր կովումը սրում եմ,—  
Ձեր կուռ ու մահատու սրիցն ե...  
Այս գիրը, վոր հիմի յես գրում եմ,—  
Ձեր բորբ ու արնագիր զրիցն ե...

Քայլում ենք ձեր համպովը, քայլում ենք,—  
Ձեր դրոշը մեր ամրակուռ ձեռումն ե...  
Ճամպին ծիգ կառուցում ենք, այրում ենք,—  
Մեր կամքը ձեր կյանքի պես յեռուն ե...  
Քայլում ենք, արևի պես փայլում ենք,—  
Դիտենք, դեռ կայանը հեռուն ե...

Մեր կուրծքը, վոր մրրկով շնչում ե,—  
Արնոտ անապատի հեքիցն ե...  
Մեր յերգը, վոր ռազմաշունչ հնչում ե,—  
Վրեժի-և արևի յերգիցն ե...  
Այն ո՞վ ե, վոր հիմի խոր ննջում ե,—  
Նա խորթ, անհարազատ յերկրիցն ե...



Թաղել են ձեզ անապատում, խորը,—  
 Ծածուկ ու հեռավոր վայրումը...  
 Կարո՞ղ են միթե թաղել, վո՞րը,—  
 Կարո՞ղ են միթե ջնջել արյունը...  
 Ընկաք դուք, կբարձրանա միշտ նորը,—  
 Մեկի տեղ վոտքի կելնի հարյուրը...

Այս հուրը, վոր սրտումս կրում եմ, —  
 Ձեր ալ ու վառ սրտի հրեցն ե...  
 Այս սուրը, վոր կռվումը սրում եմ, —  
 Ձեր կռու ու մահատու սրեցն ե...  
 Այս գիրը, վոր հիմի յես գրում եմ, —  
 Ձեր բորք ու արնագիր գրեցն ե...

1922—Յերևան



## ՓՈՔՐԻԿ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

Խարտյաշ մազերո՛վ տղա,  
 Լհակ աչքերո՛վ տղա,  
 Ցուրտ ե, հագում ես անվերք.  
 Թշվա՛ռ, կմեռնիս հագեղ.  
 Տոկուն, համարձա՛կ տղա,  
 Յեռուն փողոցի՛ տղա,  
 Վազիր ու կանչի՛ր ուժգին.  
 — Նոր լո՛ւր, հեռագի՛ր, կազե՛թ...

Բոբիկ վոտներո՛վ տղա,  
 Առույգ, կիսամե՛րկ տղա,  
 Արագ անցնում ես մայթեն.  
 Մայթը թնդում ե վազեղ.  
 Հպարտ, աշխատո՞ղ տղա.  
 Մրի, զրկանքի՛ տղա,  
 Կանչի՛ր, անցորդին կանչի՛ր.  
 — Նոր լո՛ւր, հեռագի՛ր, կազե՛թ...





Սիրուն, սրիկա՛ տղա,  
Ծխող, շրջմուխ՛կ տղա,  
Ամենքը սիրո՛ւմ են բեզի  
Դյուլթված մանկական նազեղ.  
Խայթող ու հեգնո՛ղ տղա,  
Գզվանքն անարգո՛ղ տղա,  
Թռի՛ր, բարձրածայն կանչի՛ր.  
— Նոր լո՛ւր, հեռագի՛ր, կազե՛թ...

Փոքրիկ, տաս տարո՛ւ տղա,  
Ըմբոստ, մաքառո՛ղ տղա,  
Հոսում ե քրտինք ճակտեղ,  
Այտեղ ու փոշոտ մազեղ.  
Փողոցը քնո՛ղ տղա,  
Անկյուն կուչ յեկա՛ծ տղա,  
Կանչի՛ր, քնիդ մեջ կանչի՛ր.  
— Յո՛ւրտ ե, մրսո՛ւմ եմ. կազե՛թ ..

1917—Թիֆլիս



## ԶԱՆԳՀԱՐ

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ

Վե՛ր,  
Զանգհա՛ր,  
Վե՛ր զանգտան կտուր,  
Ու զանգը տո՛ւր...  
Զանգը տո՛ւր...

Հուր հեվանքով  
Յեվ հանգով  
Դու զանգը զա՛րկ,  
Զանգը զա՛րկ.  
Ու զանգը զա՛րկ  
Զանգը զա՛րկ...

Թող զըրընգա՛,  
Թող զընգա՛  
Զարթոնքի զանգը զնգան,  
Զորակոչի զանգը զիլ:



Յեւ ի հուզանքով  
Ու զանգով—  
Յեզերքներից մինչ յեզերք  
Թող զըրընգա տիեզերք...

Մուր ե աշխարհը հիմա.  
Խոր  
Ու ժխոր ե հիմա.  
Հուր ե աշխարհը հիմա...

Բյուր սրտերումը հիմա —  
Ծփում,  
Խփում են թափով  
Հուր հորձանքները հիմա...

Զանգհա՛ր,  
Զանգի՛ր զանգն ուժգին,

Թող զըրընգա զանգն ամուր—  
Ուր կա քրտինք,  
Ուր կա մուր,  
Թող զողանջի՛,  
Թող կանչի՛,  
Թող վոտք յելնեն ամենուր...

Թող վոտք յելնեն ամենուր —  
Գող յեւ ըմբոստ յերգերով,  
Կոշտ ու մրոտ ձեռքերով,  
Կուռ միլիոնները հանուր...

Զանգհա՛ր,  
Արագ ավելի՛,  
Յերգիդ ուժ տո՛ւր,  
Զանգը տո՛ւր,  
Ձեռքիդ ուժ տո՛ւր,  
Զանգը տո՛ւր:  
Արա՛գ,  
Արա՛գ,  
Ավելի՛,  
Դու զանգը զա՛րկ,  
Զանգը զա՛րկ,  
Ու զանգը զա՛րկ,  
Զանգը զա՛րկ...

1919—ԹԻՓԼԻՍ





## ՅԵՐԵՎԱՆ

Այնպե՛ս եմ կարոտդ քաշում,  
Մաշում ե կարոտդ ինձ այնպե՛ս...

Իմ ջիվա՛ն,  
Իմ ջան,  
Իմ նախշուն,  
Յերեվա՛ն,  
Յերեվա՛ն,  
Յերեվա՛ն...

Այնպե՛ս ինձ հարազատ ես դու,  
Ինչպես Մոսկովն ե կամ Պիտեր...  
Կարմրաշող  
Յեվ ազատ ես դու,  
Արեվոտ իմ յերկի՛ր,  
Յերեվա՛ն...

Այնպե՛ս ինձ հուզում ես դու,  
Վոնց վոր վառ Շանհայ կամ Բոմբեյ,  
Գիտեմ,  
Ջա՛ն,  
Ուզում ես դու,  
Վոր քեզ ել գովեմ,  
Յերեվա՛ն...

Վորքան ել վոր լինեմ հեռու,—  
Միշտ ել զգում եմ շունչը քո...  
Գարուն ե բացվել շուրջը քո,  
Շող,  
Շաղ  
Ու շափրան,  
Յերեվա՛ն ..

Յե՛ս,  
Արեվելքի պոետ,  
Մալամ տամ աշխարհի քուչին..  
Յերգում եմ  
Հինդ,  
Հաբաշ  
Ու Զին,  
Քեզ ել եմ գովում,  
Յերեվա՛ն...

Դու ել ես արեվի յերկրում,  
Խմում ես արեվի գինի...  
Քեզ հետ յես ել եմ բերկրում,  
Հարբել եմ քեզ հետ,  
Յերեվա՛ն...



Նույնն ե ինձ համար ամենուր,—  
Հյուսիս,  
Արեւելք  
Թե հարավ,—  
Ուր վոր նոր յերգի յեն ծարավ...  
Դո՛ւ  
Նոր յերգիս հույզ,  
Յերեւա՛ն ,,

Յես քեզ հետ  
Պոեար քո--  
Յերգում ե,  
Հեվում,  
Կերտում...  
Հզոր շարքերիդ յերթում  
Յերգում ե փառքդ,  
Յերեւա՛ն. .

Այնպե՛ս եմ կարոտդ քաշում,  
Մաշում ե կարոտդ ինձ այնպե՛ս...  
Ի՛մ ջիւան,  
Ի՛մ ջան,  
Ի՛մ նախշուն,  
Յերեւա՛ն,  
Յերեւա՛ն,  
Յերեւա՛ն...

1927—Ռոստով-Դոն



## ԱՇՆԱՆ ՏԵՐԵՎԻ ՆՄԱՆ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊՈԵՏԵՐԻՆ

Աշնան տերեւի նման  
Դալո՛ւկ, յերերո՛ւն, խամրա՛ծ,  
Քշվել եք կյանքից հեռու—  
Մի հզոր ու գոռ հողմից...  
Իսկ մեր աշխարհը հիմի  
Գարուն ե ամեն կողմից,  
Բայց դուք տերեւի նման  
Դալո՛ւկ, յերերո՛ւն, խամրա՛ծ...

Իսկ մեր աշխարհը հիմի  
Գարուն ե ամեն կողմից.  
Արեւ ե, ծիծաղ ու լույս,  
Կերտում ենք որեր փարթամ...  
Ո՛, դո՛ւք, պոետնե՛ր լկված,  
Ձեր յերգը՝ տխուր, տարտամ,  
Ձեր ուղին մոլոր ու մութ  
Յեւ փակված ամեն կողմից...



Ո՛, դո՛ւք, պոետներ լկված,  
Ձեր յերգը՝ տխուր, տարտամ.  
Մըտում եք հոգնած ու մերկ  
Ձեր հոգու ծմռան ցրտում...  
Անցած որերն են վողբում  
Ձեր մութ յեվ հյուժված սրտում,  
Ներկան՝ ձեզ համար անշող,  
Գալիքը՝ անհո՛ւյս, տա՛րտամ...

Անցած որերն են վողբում  
Ձեր մութ յեվ հյուժված սրտում.  
Հարբում եք գինով, թույնով,  
Որորվում թախժոտ յերգով...  
Լիզում եք կանանցը մերկ—  
Շրթերը կարմիր ներկով,  
Մինչեվ վոր խավարն իջնի  
Ձեր հոգում, ձեր մութ սրտում...

Լիզում եք կանանցը մերկ—  
Շրթերը կարմիր ներկով.  
Իսկ մեր աշխարհումը նոր—  
Սրտերն ենք կարմիր ներկում...  
Շոգե՛գութանը հեվքոտ  
Մեր լայն արտերն ե հերկում,  
Իսկ դուք լիզում եք կանանց—  
Շրթերը կարմիր ներկով ..

Շոգե՛գութանը հեվքոտ  
Մեր լայն արտերն ե հերկում,  
Ծխում են քուլա-քուլա  
Ծխնելույզները վերծիգ...

Քանի՛ ջրանցքներ հոսուն,  
Ելեկտրոկայան հրծիգ,—  
Հին կյանքի կրծքի վրա  
Նոր ակոսներ են հերկում...

Քանի՛ ջրանցքներ հոսող,  
Ելեկտրոկայան հրծիգ...  
Քանի՛ ավերակ հյուղեր  
Դարծել են հսկա շենքեր ..  
Յեվ վաղվա կռվի համար  
Կռել ենք քանի՛ զենքեր...  
Ամեն մի բանվոր-զեղջուկ—  
Հին աշխարհի դեմ—հրծի՛գ...

Յեվ վաղվա կռվի համար  
Կռել ենք քանի՛ զենքեր—  
Լենինյան «Թույն»-ով ոծած—  
Խարխուլ աշխարհի համար ..  
Յեվ դեռ կերտում ենք անդուլ  
Յեվ դեռ կռում ենք համառ—  
Վաղվա պայքարի համար  
Նորանոր հատու զենքեր...

Աշնան տերևի նման  
Դալճիկ, չերերո՛ւն, խամրա՛ծ,  
Քշվել եք կյանքից հեռու—  
Մի հզոր ու զու հողմից...  
Իսկ մեր աշխարհը հիմի  
Դարուն ե ամեն կողմից,  
Իսկ դուք անարեւ ջրտում  
Կմեռնեք դալճիկ, խամրա՛ծ ..

1927—Ռոստով-Դոն



## ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Ժամացույցը հսկա՝  
 Հնչում ե միշտ, նորից.  
 Կտրատում ե ժամեր,  
 Բաժանում որն որից.  
 Բաժանում ե անցած  
 Հին որերը նորից.  
 Ժամացույցը հսկա  
 Հնչում ե միշտ նորից...

Աշտարակի վրա  
 Պահակի պես կանգուն,  
 Զանգում ե միշտ ու միշտ,  
 Զարկում ե միշտ, զանգում.  
 Որերի պես անկանգ,  
 Որերի պես անքուն,  
 Աշտարակի վրա  
 Պահակի պես կանգուն...

Հնչում ե նա ծմեռ,  
 Գարուն, աշուն, ամառ.  
 Սլաքները նրա  
 Շարժվում են համառ.  
 Թաղվում ե հինն անդարձ՝  
 Նոր որերի համար.  
 Հնչում ե նա ծմեռ,  
 Գարուն, աշուն, ամառ...

Զանգում ե մեկ-յերկու,  
 Զարկում յերկու-յերեք.  
 Կռում ե ժամ յեւ որ,  
 Կռում զիշեր-ցերեկ.  
 Այսօրն անցավ, գնա՛ց,  
 Դարձավ անդարձ յերեկ.  
 Զանգում ե մեկ-յերկու,  
 Զարկում յերկու-յերեք...

Յեւ ամեն մի նոր ժամ,  
 Վոր գալիս ե գնում—  
 Քանի՛ կյանք ե թաղում,  
 Քանի՛ նորեր ծնում.  
 Յեւ հոգնածներ քանի՛  
 Ճամպին ընկած մնում.  
 Յեւ ամեն մի նոր ժամ,  
 Վոր գալիս ե գնում...

Իսկ յես յեւ դու յեւ նա,  
 Վոր նոր կյանք ենք կերտում—



Միլիոնների կողքին,  
Միլիոնների յերթում,  
Նոր դարերի համպին  
Կյանքի գիրքն ենք թերթում,  
Մե՛նք—յես յեվ դու յեվ նա,  
Վոր քանդում ենք, կերտում...

Ժամացույցը մի՛շտ կա,  
Պահակի պես կանգուն,  
Մեր սրտերի նման  
Բաբախում ե, զանգում.  
Թանգ են ժամերը մեր,  
Կերտե՛նք թափով, անքուն,  
Ժամացույցը մի՛շտ կա,  
Պահակի պես կանգուն...

1917—Թիֆլիս



## ՄԱՆՁՈՒԿ

ԻՄ ՓՈՔՐԻԿ ԵԴՎԱՐԴ ՎՇՏՈՒՆՈՒՆ

Դու դեռ  
Թեթեվ թիթեռ ես,  
Մանչո՛ւկ,  
Թեվերդ նոր են բուսել:  
Ուսել ես նոր յերգ լուսե,  
Դու դեռ  
Թեթեվ թիթեռ ես,  
Մանչո՛ւկ:

Յերբ լուսաբացը զա տուն—  
Վոր փոքր սենյակդ արեվի,  
Քեզ բարեվի կգան կատուն  
Յեվ շնիկդ բրդոտ,  
Մանչո՛ւկ:



Շնիկն ու կատուն ուշիմ—  
Նստում են կողքիդ սիրով.  
Դու սիրում ես նրանց հուշիկ  
Ու ժպտում ես թեթև,  
Մանչո՛ւկ:

Հետո,  
Մեծ մարդու հովեր առած,  
Մի գիտուն ու լուրջ մարդու,  
Հայացքդ նրանց հառած,  
խոսում ես շեշտով հատու.

—Ա՛յ, լենինը վոր կա, իմ պապն ե.  
Ինձ շա՛տ, շա՛տ, շա՛տ ե սիրում.  
Կարմիր զրքեր ե ինձ տալիս.  
Յեւ խաղալիքներ ե բերում:

Ինձ իր ծնկերին դրած  
Ու յես մնում եմ արթուն...  
Հետո իր ձեռքով զրած  
Լավ զրքերիցն ե կարդում:

Յեղեկ ե—զրքում կա տպած—  
Մի մե՛ծ Հոկտեմբեր քեռի,  
Գլուխը յերկնքին կպած,  
Թեվերը յերկա՛ր-յերկա՛ր,  
Ձեռները մրոտ ու մեծ—  
Մեր տան դիմացի դարբնոցի  
Թաթոսի ձեռքի նման...

Հոկտեմբեր քեռին եսպես  
Մի որ մեյդանում կանգնած  
Գոռո՛ւմ ե,  
Վո՛նց ե գոռում  
Հողով  
Ու փողով մարդկանց,  
Թե —  
Դուք ինչի՞ յեք ծծում  
Արյունը բանվոր-գեղջուկի.  
Թե —  
Դուք ինչի՞ յեք ծծում  
Նրանց փոքրիկ մանչուկին...

Գոռում ե,  
Բռնում ե նրանց —  
Ա՛յ, են հողով  
Ու փողով մարդկանց—  
Բռնում ե,  
Բեռնում ե իշին,  
Բշում ե,  
Ծովը թափում...

Ա՛յ եսպես,  
Ելի շա՛տ ու շա՛տ բաներ:  
Մե՛կ,  
Յերկո՛ւ,  
Յերե՛ք,  
Գիտե՞ք,  
Կոմսոմոլ,



Պատկում,  
Պատրա՛ստ,  
Ա՛յ հիմի քայլում եմ,  
Դիտե՛ք:

Լսում են,  
Նսում են հուզված  
Շնիկն ու կատուն,  
Լսում.  
Գլխով են անում  
—Ա. ա՛յ ո՛ր ո՛ր,  
Դնչերը յերեսին են քսում:

Ե՛ր,  
Դո՛ւ դեռ  
Թեթեվ թիթեռ ես,  
Մանչո՛ւկ,  
Թեվերդ նոր են բուսել,  
Արդեն ուսել ես նոր յերգ լուսել.  
Ե՛ր,  
Դու դեռ  
Թեթեվ թիթեռ ես,  
Մանչո՛ւկ...

1924—Թիֆլիս



## ՇՈԳԵԿԱՌԲ

Սահմաններ չունի հիմա  
Աշխարհը, նո՛ր ե, անծի՛ր.  
Շոգեկա՛ռք,  
Շնչի՛ր,  
Շաչի՛ր,  
Սլացի՛ր,  
Սուլի՛ր,  
Անցի՛ր:

Գծերդ—յերկաթ յերկու—  
Ափերից յերկրի մինչ ափ,  
Բերում են կյանքին նոր հույզ,  
Նոր լեզու, մի զարկ, մի չափ...

Յերգում ես ձայնովդ զի՛լ՝  
Նոր յերգեր, նոր շեշտ յեվ հանգ,  
Դու քանդող կենցաղը հին,  
Դու արվեստ, դու հույզ, հեվանք:



Աշխարհը ողակ-ողակ  
Շղթայիւր, իրար ծուլիւր,  
Շոգեկա՛ռք,  
Շտա՛պ,  
Շտա՛պ,  
Սլացի՛ր,  
Սուրա՛,  
Սուլի՛ր:

Զարթնել են գյուղերն ահա  
Դաշտերում, լեռան լանջին.  
Յեւ շփոթ ու զարմանքով  
Գերի յեն քո սեգ կանչին...

Քաղաքը գյուղին կապիր  
Յեւ գյուղը բանվոր մարդուն,  
Վոր հիմի յերկրումը մեր  
Նոր կյանք ու բախտ ե հարթում...

Դե անցիր յերկրից յերկիր,  
Դե վազիր դեպ նոր յերկիր,  
Շոգեկա՛ռք,  
Շարժվիր,  
Շնչի՛ր,  
Սլացի՛ր,  
Սուլի՛ր,  
Յերգի՛ր:

Բարեւ տուր կանչովդ սուր  
Քաղաքին ժխոր ու ժիր.  
Հին կյանքի յեւ դարերի  
Մոռացում, մահը զուժիր...

Հրդեհի՛ր հզոր մի հուր  
Հրատենչ մարդկանց հոգում,  
Թող զգան նրանք հիմի  
Պայքարի խինդն ու խոկում...

Սահմաններ չունի հիմա  
Աշխարհը, նո՛ր ե, անձի՛ր.  
Շոգեկա՛ռք,  
Շնչի՛ր,  
Շաչի՛ր,  
Սլացի՛ր,  
Սուլի՛ր,  
Անցի՛ր:

1917—ԹԻՖԼԻՍ





## ՄԱՅԻՍԱԿԱՆ

### 1

Հեղեղի պես յեկանք այսոր  
Վողողելու փողոցը մեծ.—  
Մեր մանկության որրանը հին,  
Ուր մայրը մեր մեզի ծնեց...

Փողոցներովն այս աղմկոտ,  
Վոլոր ու ծիգ, լայն յեվ անձուկ—  
Անցնում եմ այժմ շարքերը մեր,  
Զուլված իրար ու թեվանցուկ...

Մոռացումի փոշիներին  
Հանձնեցինք մենք ցավն ու կական,  
Հզոր ե մեր յերթը հիմի,  
Փոթորկածին յեվ մոզական...

Ու կանչում ենք աշխարհների  
Յեզերքներից դեպի յեզերք.  
— Յես, դու յեվ նա—ամենքս մե'կ.  
Մեր հայրենիքը—տիեզերք...

Մենք կերտողներ դարը գալիք,  
Աշխատանքի բանակն ենք հաղթ.  
Քանդում ենք այժմ աշխարհը հին,  
Կերտում ենք նոր արեւ ու քախտ...

Այսոր մե'րն ե աշխարհը վառ,  
Աշխարհը նոր, կարմիր յեվ ալ.  
Զորս ծեգերի հովերի հետ  
Ուզում ենք մենք յերգել, հեւալ...

Հայացքը մեր՝ արեւներին,  
Այսոր իջանք փողոցը մեծ,  
Ուր, մայթերի վրա յերեկ  
Մայր զրկանքը մեզի ծնեց...

### 2

Ալեքսանդրումը հին:  
Մայիս—քսան թվին:  
Յեւ դասակարգը մեր—  
Հին աշխարհին՝ վոսոխ...  
Խրոխտ շարքերը մեր  
Հուժկու զրոհ տվին,  
Վոնց վոր լավա հրե—  
Սարիցը վար հոսող...

Զրահագնացքը զիւ,  
Հզորահունչ զնգաց  
Կայարանումն անքուն—  
Մայիսյան ցուրտ մի որ...



Յեվ Ալեքսանդր հին—  
Բռունցքի տակ սմբած,  
Լսեց սրտումն իր խոր  
Պայքարի յերգ մի նոր...

Սրտումը մերկ յերկրի—  
Ցավագալար ու մութ,  
Հրավառվեց կյանքի  
Կարոտանքը հանգած...  
Բանվորական շարքերն  
Աշխատանքի հմուտ—  
Յերկաթակուռ կամրով  
Վոտքի յելան հանկարծ...

Քաղաքներում, գյուղում,  
Դեպոներում, հանքում  
Յեվ ամենուր, ուր վոր  
Քրտինք եր, մահ ու սով,  
Հոգիները հազար  
Սպասումով անքուն—  
Շողշողացին նորից  
Ազատ կյանքի հուսով...

Մայիսական աշն ուր—  
Հին հնամյա յերկրում,  
Վոնց վոր հրե մի սուր  
Գիշերվա մութ սրտին...  
Դարը կիսվեց կտրուկ,  
Դարը դարձավ յերկու.  
Յեվ ալ արյուն հոսեց  
Ծնված դարի շրթին...

Յեվ հազարներ յելա՛ն,  
Վրիժավառ յելա՛ն—  
Մոլուցքի դեմը բիրտ—  
Բռունցքները գնդած...  
Ե՛լս, քնկերներ իմ լավ,  
Վոր վերք առին, մեռան,  
Վերջին շնչումն իրենց  
Յերգը խրոխտ թնդաց...

3

Մայիսն յեկավ նորից,  
Յեկավ ալվառ, խնդուն.  
Փովեց յեռուն ու ժիր  
Մեր աշխարհի վրա...  
Աշխատանքի, կովի  
Նոր յերգեր են թնդում  
Հոգիներումը մեր,  
Ծալքերումը նրա...

Մայիսական իմ յերգ,  
Յե՛րգ իմ հույզով զեղուն,  
Վոր հյուսվել ես կյանքին,  
Աշխատանքին, հողին...  
Հնչիր ազատ ու զիլ  
Յեվ տարածվիր հեռո՛ւն,  
Ձուլվիր մարդուն կերտող,  
Ձուլվիր լույսին, շողին...

Ժպտուն, փարթամ, շողշող  
Նորից մայիսը յեկավ.



Զրահագնացքը կուռ —  
Զինված կամքով համառ  
Սուրում ե գիւթում  
Դարի համպով յերկար,  
Դեպի աշխարհ մի նոր —  
Միլիոնների համար:

Զրահագնացքը մեր —  
Զրահված հզոր ուժով,  
Քանդում ե կյանքը հին,  
Նոր աշխարհ ե կերտում...  
Յեւ հայացքն իր վառված —  
Մութ խորշերը խուժող,  
Շողշողում ե պայծառ —  
Իր հաղթական յերթում...

Յեւ սուրում ե թափով  
Յերկաթագծի վրա.  
Դարերը ծեր, զառամ  
Թողնում հեռու, յետեւ...  
Յեւ դասակարգը մեր  
Մեքենավար նրա —  
Լարել ե կամքը կուռ,  
Հույզեր, մկան ու թեւ...

Կայարանից կայան,  
Առաջ, հեռու-հեռուն,  
Զրահագնացքը կուռ  
Թռչում ե զոռ յերգով...

Յեւ դասակարգը մեր —  
Կյանքի տենչով յեռուն,  
Կկերտի նոր աշխարհ  
Յերկաթակուռ ծեփով...

3

Մեր աշխարհում — մայիս ու շող,  
Մեր աշխարհում — յեռանդ ու յեռք,  
Արեւափայլ յերանգ ու յերգ.  
Մեր աշխարհում — մայիս ու շող,  
Նոր դարերին պատգամ հուշող  
Միլիոն հույզեր, մկան ու ծեփ.  
Մեր աշխարհում — մայիս ու շող,  
Մեր աշխարհում — յեռանդ ու յեռք...

Հեռվում դեռ կան այնքա՜ն վայրեր —  
Ուր մայիսն ե արյուն, վառող.  
Ազատ կյանքի այնպե՜ս կարոտ —  
Հեռվում դեռ կան այնքա՜ն վայրեր:  
Ուր կան մարդիկ, վորդիք, մայրեր —  
Արեւագուրկ, ցասկոտ, աղոտ.  
Հեռվում դեռ կան այնքա՜ն վայրեր —  
Ուր մայիսն ե արյուն, վառող...

Մենք քայլում ենք խիտ շարքերով —  
Մենք ու նրանք՝ դեպի գալիք —  
Վորպես շաչող հսկա ալիք —  
Մենք քայլում ենք խիտ շարքերով:  
Աշխատանքի գիւղ զարկերով  
Մենք կփռենք լույս ու բարիք.  
Մենք քայլում ենք խիտ շարքերով —  
Մենք ու նրանք՝ դեպի գալիք...



Քանի՞սը դեռ կրնկենն գետին  
 Այս պայքարումը վճռական.  
 Մինչ հաղթանակը վերջնական—  
 Քանի՞սը դեռ կրնկենն գետին:  
 Յեվ կուղեկցեն մեր մեծ յերթին  
 Դեռ քրքիջները շնական.  
 Քանի՞սը դեռ կրնկենն գետին:  
 Այս պայքարումը վճռական...

Կտատանվեն ճամպի կեսին  
 Շարքումը մեր քանի՞սը դեռ.  
 Քանի՞ վախկոտ ու մեղկ սրտեր  
 Կտատանվեն ճամպի կեսին:  
 Յեվ կերազեն որերը սին  
 Ու կփռեն քանի՞ ստեր.  
 Կտատանվեն ճամպի կեսին  
 Շարքումը մեր քանի՞սը դեռ...

Հաղթանակովը վերջնական  
 Մենք կջնջենք ցավ ու դավեր.  
 Կխորտակենք խարխուլ նավեր —  
 Հաղթանակովը վերջնական,  
 Յերթումը մեր մեծ, վճռական—  
 Մենք կփռենք կյանք ու ավեր.  
 Հաղթանակովը վերջնական  
 Մենք կջնջենք ցավ ու դավեր...

1920 թ. — Ղրիմ



## Հ. Ս. Խ. Հ.

Պանգնել ես այսօր խրոխտ,  
 Տիտանի նման, վեպկա՛մ.  
 Հագել ես շողշող շորեր—  
 Այ ու վառ, բոցով վառված.  
 Տվել ես հին հուշերիդ  
 Մահատու վերջին հարված,  
 Յեվ հիմի հաղթ ու ժպտուն  
 Կանչում ես. — Տեսե՛ք, յես կա՛մ:

Գլխարկդ թե՛ք ես դրել  
 Ու վրան աստղեր հրթեվ.  
 Թեվերդ վեր ես քշտել,  
 Իջել ես կյանքի կրկես.  
 Կենսատու ջուր ես հորդուն —  
 Սրտերին տապ ու հրկեզ,  
 Կարմրաշող հուր ես հիմա  
 Յեվ համակ բոց ու հրդեհ:

Բացել ես սահմանների  
 Աշխարհի հեռվի հեռուն,  
 Զուլվել ես հոգովդ անդարձ  
 Աշխարհի շաչող շնչին.



Քանդել ես Մասիսը հին —  
 Առասպել չար ու ճշին,  
 Յեւ հիմի վորպես Վեզուվ  
 Ժայթքում ես լավա յեռուն:  
 Յեւ յեթե ցանկաս հիմի —  
 Արեւը յերկնի ծոցից  
 Կպոկես բազկովդ կուռ,  
 Կփռես յերկրի վրա.  
 Արեւի արո՛ւ զաւակ  
 Դու՛ սերված ցեղից նրա —  
 Մութ խորշերն ու խավարներ  
 Կշողան քո թեժ բոցից:  
 Բանվորներ բրոնզաբազուկ,  
 Աժդահա և հրաչվի —  
 Զարնում են մուրճով հզոր  
 Զնդանիդ, մեծ զարբնո՛ց.  
 Բանվորները քո՛ դարբին՝  
 Բոցել են քո բորբ հնոց,  
 Կերտում են նոր գործիքներ,  
 Վոր հինը անդարձ խաչվի:  
 Կանգնել ես այսոր խրոխտ,  
 Տիտանի նման, վեսկամ.  
 Հագել ես շողշող շորեր —  
 Այ ու վառ, բոցով վառված.  
 Տվել ես հին հուշերիդ  
 Մահատու վերջին հարված.  
 Յեւ հիմի հաղթ ու ժպտուն  
 Կանչում ես. — Տեսե՛ք, յես կա՛մ:  
 1922 — Յերևան

## ԱՐՏԵՐԸ

Արտերը ծլել են, արտերը կանաչ են,  
 Արտերը շնչում են.  
 Արտումը յերգեր կան, նրանք ինձ հանաչ են,  
 Ու բարձր հնչում են...

Արտերը փռվել են, անափ ու անծեր են,  
 Խալու պես բացվել են.  
 Յերկինքը շաղել է, ամպերը անցել են,  
 Ծիլերը թացվել են...

Արտերը ծովի պես, ծիծաղում, ծփում են,  
 Ծափում են հովիցը.  
 Ծիլերը ծարավ են, ծիլերը ծծում են  
 Ծծերը հողիցը...

Արտերը հեփում են, արտերը հղի յեն,  
 Նագում են արտերը.  
 Վառ բերկրանքով լի յեն, վոսկեծամ տղի յեն  
 Սպասում արտերը...

Տրակտորը վազել է արտերի սրտումը,  
 Յերգել է, հերկել է.



Արեւը զարկել ե՛ւ շիկ ժպիտ շրթումը,  
Յեւ հերկը ներկել ե...

Յեւ ամեն մի ծիւղ մեր յերկրի արտումը  
Ժպտաւառ յեւ տաք ե.  
Հին աշխարհի դեմը՝ մոլեգին մարտումը  
Մահատու գնդակ ե...

Արտերը ծլել են, արտերը կանաչ են,  
Արտերը շնչում են.  
Արտումը յերգեր կան, նրանք ինձ հանաչ են,  
Ու բարձր հնչում են...

1928—Յերևան



## ԶԱՆՆ, ՍԱՎԵՏԻ ՅԵՐԿԻՐ

— Գարունն եկավ, Մարո՛ ջան,  
Արեւն ելավ վառուն,  
Կրկնում են, յարո՛ ջան,  
Սառն աղբյուրներն, առուն.  
Մեր սրտերն ել, Մարո՛ ջան,  
Վոնց վոր ծաղկած գարուն.  
Ես ի՛նչ անուշ ու վառ ես,  
Զա՛ն, Սավետի՛ յերկիր:

— Արեւն ելավ, Մարո՛ ջան,  
Պաչեց դռը սարի,  
Տրակտորըդ, յարո՛ ջան,  
Բշի՛ր, դեսը արի,  
Թեւրդ քշտիր, Մարո՛ ջան,  
Մեր արտերը վարի՛.  
Ես ի՛նչ անուշ ու վառ ես,  
Զա՛ն, Սավետի՛ յերկիր:

— Գարունն եկավ, Մարո՛ ջան,  
Ձները վողջ հալվան.  
Մեր դաշտերը, յարո՛ ջան,  
Ծաղկունքներով արվան.



Տրակտորներ, Մարո՛ ջան,  
Կապած շարքով քարվան.  
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,  
Զա՛ն, Սավետի՛ յերկիր:

— Զա՛ն կոմսոմոլ, Մարո՛ ջան,  
Տրակտորըդ յերգեց.  
Վազ տվեց զիւ, յարո՛ ջան,  
Արտերը մեր հերկեց.  
Արեւն առավ, Մարո՛ ջան,  
Հողը վոսկով ներկեց.  
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,  
Զա՛ն, Սավետի՛ յերկիր:

— Զահել ես դու, Մարո՛ ջան,  
Վոնց վոր կարմիր խնձոր.  
Աշխատում ես, յարո՛ ջան,  
Արտերումը հնձվոր.  
Դու մեր գեղին, Մարո՛ ջան,  
Արեւի շող վոնց վոր.  
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,  
Զա՛ն, Սավետի՛ յերկիր:

— Զա՛ն կոմսոմոլ, Մարո՛ ջան,  
Բաղրումն ուսում առար.  
Գութանիցը, յարո՛ ջան,  
Խռով կացար, սառար.  
Գեղը յեկար, Մարո՛ ջան,  
Տրակտորիստ դառար.  
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,  
Զա՛ն, Սավետի՛ յերկիր:

— Մեր գեղումը, Մարո՛ ջան,  
Կինքաժին ես դառել.  
Սաղ կանանցը, յարո՛ ջան,  
Ժողովի յես տարել.  
Հին ադաթը, Մարո՛ ջան,  
Վոտնատակ ես արել.  
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,  
Զա՛ն, Սավետի՛ յերկիր:

— Գեղխորհրդում, Մարո՛ ջան,  
Նստել ես դու ժողով.  
Յերեսըդ թուխ, յարո՛ ջան,  
Արեգական շողով.  
Կուլակները, Մարո՛ ջան,  
Բռնվել են դողով.  
Ես ի՞նչ անուշ ու վառ ես,  
Զա՛ն, Սավետի՛ յերկիր:

1928—Յերեան



## Լ Ե Ն Ի Ն

### 1

Հիմի, աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա մի՛շտ ու մի՛շտ,  
Այնտեղ, ուր մարդու քրտինքն ե հոսում,  
Ուր վոր զրկանք կա ու վիշտ:

Հիմի, այս ժամին Ռուրում, Մադրիդում  
Յեվ կամ Փարիզում, ալլուր—  
Հզորահզոր զորանցքն են դիտում  
Ռազմագնդերի հարյուր:

Մոտենում ե նա շարքերին շաչող,  
Շարքերին խոժոռ, անոթի,  
Վողջույն ե տալիս մտերիմ կանչով,  
Վոնց վոր հնամայս ծանոթի:

Յեվ շշնջում ե նրանց ականջին  
Խոսքեր վառ՝ լուսե գալիքի,  
Ու ծայնակցում են նրա գոռ կանչին՝  
Շարքերը հուզվող ալիքի...

### 2

Հիմի, աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա մի՛շտ ու մի՛շտ,  
Ուր վոր վառողն ե վորոտով խոսում,  
Հորդում ե արյուն ու վիշտ:

Մեծ քաղաքների լայն փողոցներում,  
Բարրիկադների վրա,  
Մարտնչող, չարքաշ շարքերի բոցում  
Հնչում ե ծայնը նրա:

Վոնց վոր յերկնքիցն ամպրոպը պայթի  
Թնդում ե ծայնը համառ.  
— Դե յելի՛ր, աշխարհ մրի, զրկանքի,  
Կռվիր նոր կյանքի համար:

Անցնում են շարքեր, զենքերն են փայլում,  
Մարտագոռ յերգ են յերգում.  
Յեվ առաջապահ Լենինն ե քայլում,  
Ահուր դրոշակը ձեռքում...

### 3

Հիմի, աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա մի՛շտ ու մի՛շտ,  
Ուր վոր Նիլվանան որոր ե ասում,  
Ուր վոր հաշիշ կա ու վիշտ:

Յես նրան տեսա Աֆրիկումը լուռ,  
Հինդում, Իրաքում, Չինում,



Հին Արեւելքի հոգիները բոլոր  
Վրեժի ուռնքով եր գինում:

Յեւ ամեն լեզվով սալամ եր տալիս  
Խալիսին տառապող, տրտում:  
Թե Հոկտեմբերը ձեզ մոտ ե գալիս,  
Վոր շողա ձեր մեծ սրտում:

Տեսա, ել Շարքի խալխը հիացած,  
Ցնցվեց ու վոտքի յելավ:  
Նոր կյանքի տենչով կուռ ու միացած  
Յեւ հորդեց վոնց վոր սելավ..

4

Այն ո՞վ ե նստել խարխուլ խրճիթում  
Հնդիկ գյուղացու, այն ո՞վ  
Անհող հնդիկին այն ի՞նչ ե պատմում  
Մտերիմ յեւ կուռ ծայնով:

Այն ո՞վ ե շրջում շաչող Շանհայում,  
Անցնում Պեկինից Կանտոն:  
Կուլիների հետ այն ո՞վ ե բայլում  
Վեռական, ըմբոստ, անտուն:

Այն ո՞վ ե վառել խարույկ մի հզոր  
Հին Արեւելքի սրտում:  
Այն ո՞վ ե բոցել վառ հրդեհ հսոր  
Բոլոր հոգիների ցրտում:

Թնդացին հանկարծ աշխարհումն անծայր  
Ձայները միլիոն յեւ մին:

— Միլիոնից ծնված, միլիոնի հանճար  
Լենի՛նն ե, Լենի՛ն, Լենի՛ն...

5

Մեր նոր աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա մի՛շտ ու մի՛շտ:  
Ուր վոր ջրերն են ջրանցքով հոսում,  
Ուր աշխատանքն ե անվիշտ:

Հիմի մեր յերկրի նոր զավոդներում,  
Գործարաններում կանգուն  
Իլիջ կանգնած դատում ե, դիտում  
Հայացքովը սուր, անբուն:

Կոպեկ ու կոպեկ հաշիվ ե անում,  
Վիճում ե, պնդում համառ:  
Փաստեր ե կիտում, թվեր ե հանում  
Աշխարհի բախտի համար:

Հիմի մեր գյուղը ելեկտրոլուսով,  
Իլիջն ե շրջում գյուղում:  
Գյուղը բշել ե տառապանքն ու սով,  
Շոգեգութանն ե յուղում...

6

Մեր վառ աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա մի՛շտ ու մի՛շտ,  
Ուր հազար-հազար մանկիկներ հասուն  
Այժմ խլրտում են անվիշտ:



Պիոներական զնդերն են հուզված,  
Թմբուկն ե թափով թնդում.  
Իլիջը հիմի շարքերին ձուլված —  
Յերգում ե, հուզվում, խնդում:

Յեվ փոքրիկ-փոքրիկ հոկտեմբերիկներ —  
Դեռ թոթով, թիթեռ, անո՞ւժ.  
Լենին պապիկը ժպտում ե հետներ  
Ու շոյում նրանց անո՞ւշ:

Դու թուխ ու թոթով թմբիկի թմբկահա՛ր,  
Թող թմբուկդ թունդ թնդա՛,  
Իլիչի հետը թող սավետական  
Մեր լայն աշխարհը խնդա...

7

Կարմիր Կրեմլի պատի տակը ծիգ —  
Կրասնի Պլոշադի վրա,  
Կանգնել ե ահա գերեզման հրծիգ,  
Այնտեղ — մարմինը նրա:

Կարո՞ղ ե միթե գերեզմանը այն  
Տեղ տալ Իլիչին հսկա.  
Կարո՞ղ ե թեկուզ մեր աշխարհը լայն  
Իր նեղ լինելը չզգա:

Դասակարգը մեր՝ միլիարդ ու ավել,  
Լենինը — միլիարդ — հանո՞ւր.  
Յեվ ո՞վ կարող ե միլիարդը թաղել  
Յեվ ինչպե՞ս թաղել կամ ո՞ւր:

Հիմի աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա մի՛շտ ու մի՛շտ,  
Այնտեղ, ուր վոր կա տանջանք ու ցատում,  
Ուր կա աշխատանք անվիշտ...

1926 — Թիֆլիս





## Մ Ե Ն Ք

Մենք նո՛ր ենք, մե՛նք—պոետներ ջահել,  
Մեր մուսան դասակարգն ե, շոգին.  
Բռնել ենք ելեկտրավառ ջահեր  
Յեվ վառում հին աշխարհի հոգին...

Յես մենակ՝ որերի դեմ—չնչին.  
Մենք ամենքս մեկտեղ—հզոր մի տոկ.  
Մեր հազար յեվ բյուր հազար շնչին—  
Մի լեզու, մի զարկերակ, մի թոր...

Բեթհովենը ստվեր ե անուժ  
Մեր վաղվա յերգերի դեմ հսկա.  
Կհնչի վաղը մեր յերգն անուշ,  
Աշխարհը հուզանք ու զանգ կզգա...

Մենք նո՛ր ենք, մե՛նք—պոետներ ջահել,  
Մեր մուսան դասակարգն ե, շոգին.  
Բռնել ենք ելեկտրավառ ջահեր  
Յեվ վառում հին աշխարհի հոգին...

1923 - 1. հունիսական

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ



## ՋԱՆ, ԱՐԵՎԵԼԲ

Խորասանու խաս խալու պես՝  
Հազար գույնով փռվել ես դու,  
Շող ու շափրան, ալ ու նարինջ,  
Վոսկեյերանգ, ջա՛ն Արեվելք:  
Իմ արեվգիր ու արնագույն  
Նոր գրքումը գրվել ես դու,  
Իմ յերգի շունչ, իմ հոգու հույզ,  
Իմ կյանքի լույս, ջա՛ն Արեվելք:

Սրտումդ ջերմ՝ քանի՛ լավա,  
Քանի՛ արեվ, քանի՛ կրակ,  
Արեվածին, արեվամայր,  
Արեվաշող, ջա՛ն Արեվելք:  
Հոգումդ հուր՝ քանի՛ խորհուրդ,  
Արնոտ գրքի քանի՛ պրակ,  
Դու նոր դարու հսկա՝ շայիր,  
Դու մեծ հանճար, ջա՛ն Արեվելք:

Գիշերների դու վառվառ ջահ,  
Ջան ու ջահել, ջիվա՛ն ես դու,  
Դու կարմրաբաշ արու ծնող,  
Խոր յերկունքով, ջա՛ն Արեվելք:



Խոր վերքերի ու հեվքերի,  
Նոր յերգերի դիվա՛ն ես դու,  
Հազար տաղով, հազար խաղով,  
Շող ու շաղով, ջա՛ն Արեվելք:

Յես քո վորդին—պոետը քո,  
Բարձր ու հպարտ գովքդ յերգեմ,  
Հրե փառքով, կարմիր վառքով,  
Բարձրաթուխք, ջա՛ն Արեվելք:  
Յես քո տիտան ու շառաչող  
Մեծ պայքարի թո՛վքը յերգեմ,  
Առյուծաբաշ, հաղթ ու կրքոտ,  
Իմ գովական, ջա՛ն Արեվելք:



## Ի Մ Յ Ե Ր Գ Ը

### 1

Իմ յերգը ցնորք ու յերագական չի.  
Իմ յերգը նրբահյուս ու նազական չի՛.  
Սուլթանի դիվանին նա սազական չի՛:

Յերգերս հյուղերումն եմ ուսել յե՛ս.  
Հազար հուր սրտերիցն եմ հյուսել յե՛ս.  
Շանթերի շողոցովն եմ լուսել յե՛ս:

Իմ շարած բառերի մեջ մուգ արյո՛ւն կա.  
Յեվ գալիք հաղթանակ ու գարուն կա.  
Բարձրականչ, համարձակ եմ խոսո՛ւմ յե՛ս:

Իմ յերգում հորձանքներ ու հողմե՛ր կան.  
Յեվ զարթնող աշխարհի չորս կողմե՛ր կան,  
Մրափած մրրիկներն եմ հուզում յե՛ս:

Ջարդում եմ աշխարհը հինով լի՛.  
Փարչերը քնաբեր գինով լի՛.  
Յերգովքս ձեր սրտումն եմ հոսում յե՛ս:



Ե՛յ, յե՛րգ իմ, աշխարհը մեծ դիվանդ է.  
Դիվանը թող լսի քեզ, վոր հիվանդ է.  
Աշխարհի լուսաբացն եմ ուզում յե՛ս:

Իմ յերգը ցնորք ու յերազական չի՛.  
Իմ յերգը նրբահյուս յեվ նազական չի՛.  
Վոսկեզոծ դահլիճին նա սազական չի՛:

2

Այս գարունը գյուլխառանին ի՞նչ:  
Այս գարունը վարդի գովքին չի՛:  
Յարն ու գինին այժմ հորանջեն թող:  
Այս գարունը սիրո թովքին չի՛:

Խայամը վարդի յերգիչ է.  
Իսկ այսոր պայքարի կանչ կա ..  
Պայքարումը վարդի յերգն ի՞նչ է:  
Հափըզի գինու յերգերը,  
Արեվե՛լք, քեզ համար քիչ է...

Շաչ են  
Հիմի  
Զորս գետերդ.  
Ծուփ ես  
Հիմի,  
Դու ծփանք ես.  
Շանթ է  
Հիմի  
Բաց յեթերդ,  
Արեվե՛լք,  
Իմ յերկիր:

Արեվե՛լք,  
Արնոտ յերկի՛ր իմ,  
Քեզ քանի՛ անգամ մորթել են...  
Այսոր  
Արար ու վարար ես.  
Այսոր  
Հույզերդ հորդել են...

Ֆաբրի յերգերը չկան ել.  
Հիմի վրեժի հորձանք ես.  
Հիմի հնի դեմ փորձանք ես.  
Հիմի մրդկի հոսանք ես:

Կրծքումդ մրրկահունչ դողանջ կա:  
Ղողանջդ լսող հազար ականջ կա:  
Ըմբոստ վորդիններիդ զորականչ կա,  
Արեվե՛լք, ի՛մ յերկիր:

Իմ յերգը ցնորք ու յերազական չի՛.  
Իմ յերգը նրբահյուս յեվ նազական չի՛.  
Մահացող աշխարհին նա սազական չի՛:

3

Արեվելքը  
Հո՛ւր է  
Հիմա,  
Հին  
Ու  
Հինա  
Զի՛:



Արեւելքի կրծքին

Հիմա—

Փորել ենք խոր պայծող մինա...

Արեւելքը

Հուր ե

Հիմա,

Հին

Ու

Հինա

Ձի'։

Ե՛յ,

Մուեզզի'ն,

Մինարայից ո՞ւր ես կանչում.

Ձո՛ւր ես կանչում.

— Ալլահ եբբա՛ա՛ա՛ա՛ր,

Ալլահ եբբա՛ա՛ա՛ա՛ա՛ր։

Այժմ

Կանչը քո

Մեր հուր հոգին հուզողը չի'.

Ազդեցներում սուզողը չի'.

Հաշիշ ծխել ուզողը չի'

Մեր հուր հոգին...

Արեւելքը

Հուր ե

Հիմա,

Հին

Ու

Հինա

Ձի'։

Իմ յերգը ցնորք ու յերազական չի'.

Իմ յերգը նրբահյուս յեվ նազական չի'.

Մարմարե քյոշկերին նա սազական չի'։

1918—Թիֆլիս





# ԼՍԻՐ, ԻՄ ԸՆԿԵՐ

## 1

Լսի՛ր,  
Ի՛մ ընկեր,  
Հորանջող ու դանդաղ քայլերով  
Մի՛ քայլիր,  
Մի՛ քայլիր...

Աշխարհումն ուղտերի կարավան  
Ել չկա՛:  
Աշխարհը  
Վազք է,  
Վազք է  
Հիմի:  
Իսկ դու,  
Ի՛մ ընկեր,  
Հորանջող ու դանդաղ քայլերով  
Մի՛ քայլիր,  
Մի՛ քայլիր...

Հիմի  
Անապատումն ել Շարքի  
Յերագուն կարավան  
Ել չկա՛:  
Հիմի  
Յեռուն բազարումը Բոմպեյի—  
Բեռնատար իշուկին  
Գին տվող  
Ել չկա:  
Հնացե՛լ,  
Մնացե՛լ,  
Անցե՛լ ե  
Հիմի...

Արդեն խուլ են,  
Խարխուլ են  
Ճախարակները փայտաշեն...  
Դազգյահը լքված—  
Վոնց վոր ծերուկ բեռնակիր—  
Իր անճար որն է սգում...

Լսո՞ւմ ես—  
Շոգեքարվանն է թռչում:  
Հիմի  
Նրա յերգն է հնչում:  
Աշխարհը նրա պես  
Խուլ վա՛զք է,  
Վա՛զք է...

Հզոր յերկաթն է զորրնգում  
Մեր փողոցում,



Ձեր փողոցում,  
Աշխարհ-փողոցումը մեկ...  
Յերկաթի յերգն ե հնչում—  
Թռիչք ու շառաչ...  
Մրոտ բազուկներն են,  
Վոր հրում են նրան  
Առաջ,  
Առաջ...

Իսկ դո՛ւ,  
Իմ ընկեր,  
Հորանջող ու դանդաղ բայլերով  
Մի՛ բայլիր,  
Մի՛ բայլիր...

2

Քթախոտ վահառող Ջափարն ասի թող.  
— Աշխարհը բթիս տակն ե միայն...

Իսկ դո՛ւ,  
Իմ ընկեր,  
Վոր շունչ ես տալիս  
Յերկաթին  
Ու կյանքին,  
Լսի՛ր,  
Աշխարհը մե՛ծ ե,  
Մե՛ծ ե  
Ու մե՛կ,  
Շար-շար ողակներից շաղկապված մի շղթա...

Աշխարհը մի նոր հերիաթ ունի,  
Վորը հյուսել են  
Յեվ լուսել են  
Չարքաշ,  
Մրոտ  
Յեվ յերկաթին շունչ տվող մարդիկ...

Ասում ես.  
— Ո՞ւր,  
Ո՞ւր են նրանք:

Նայիր յերկնքին,  
Սահմանն ի՞նչ,  
Նա մեկ ե,  
Մեծ ե ու խոր:  
Այնտեղ աստղերն են շողում  
Շարք-շարք,  
Խումբ-խումբ,  
Հանուր...

Ասում ես.  
— Ո՞ւր,  
Ո՞ւր են նրանք:  
— Ամենու՛ր են...

Ճիշտ այդպես,  
Ճիշտ այդպես աշխարհի վրա փռված  
Բյու՛ր են,  
Հո՛ւր են,  
Ամենու՛ր են...



Յեղն ի՞նչ,  
Սպիտակ,  
Սեւ  
Կամ դեղինն ի՞նչ,  
Մե՛կ  
Յեւ լամենո՛ւր են...

3

Սազանդա՛ր,  
Սազանդա՛ր,  
Ե՛յ,  
Ձայնը չնգնգան չունգուրիդ կանչ չունի՛,  
Ձափ չունի՛,  
Ձի լսվում,  
Ձե՛ւ,  
Ձայնը չնգնգան չունգուրիդ թույլ ե  
Ու թախծոտ ..  
Կլռեն յերգերը չունգուրիդ լալկան...  
Չունգուրիդ ճիշդ չնգնգան  
Եւ չի՛ հուզի,  
Ձի՛ հուզի մեզ,  
Սիրտը հրթիռ նոր աշխարհի  
Եւ չի՛ ուզի,  
Եւ չի՛ ուզի  
Հին յերգդ հեզ...  
Հողաշխարհում  
Հիմի  
Հանուր,

Ամուր,  
Մեկանց  
Շեփորում են շեփորները պղնձաշեն,  
Յեւ շեփորում են  
Խորակա՛նչ  
Ու նորակա՛նչ,  
Ռազմի շեփոր են շեփորում  
Հզորակա՛նչ,  
Զորակա՛նչ...

Միլիոն պրկված բռունցքները  
Հարյուր փափուկ ձեռների դեմ—  
Զորակա՛նչ...

Հիմի՛  
Յերկիրը յերկնում ե.  
Հուզանք  
Ու զանգ  
Յերկունք ե մեծ,—  
Վոր գալարվի,  
Վոր գալարվի,  
Վոր բարձր ճչա,  
Հեվա՛,  
Ծնի  
Պողպատակուռ անիվների,  
Ելեկտրավառ հանճարների  
Միլիոնակուռ ղեկավարը...



Լսո՞ւմ ես,  
 Ի՛մ ընկեր,  
 Հեռու  
 Կամ մոտիկ,  
 Ծանոթ,  
 Անծանոթ,  
 Սեզ,  
 Օպիտակ  
 Կամ դեղին,  
 Ուր վոր կաս,  
 Ուր վոր ես,  
 Ով վոր ես,  
 Լսի՛ր,  
 Հորանջող ու դանդաղ բայլերով  
 Մի՛ բայլի՛ր,  
 Մի՛ բայլի՛ր...

1918—Թիֆլիս



## Ո Ի Ղ Տ

ՆՎԵՐ ԻՐԱՔԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Յերեկ,  
 Անապատումը մեր անսահման,  
 Ի՛մ ուղտ,  
 Ի՛մ սիրելի,  
 Պարանոցդ վեր պարզած,  
 Ուզում եյիր շեմս-արեվը համբուրել...

Յերեկ,  
 Ովազիսումն ել Սամի,  
 Ի՛մ սրտակից,  
 Ի՛մ մտերիմ,  
 Դիշերները յես ու դու  
 Յերկնքի փերուզատառ գիրքն եյինք կարդում:

Հիշում ես,  
 Չե՞ս,  
 Վոր յես համբուրում եյի բեզ,  
 Աչքերը քո,  
 Ի՛մ ընկեր,  
 Ի՛մ սիրելի:



Իմ աշխատանքի  
Ու համպաների ընկեր,  
Հիշում ես,  
Ձե՞,  
Վոր քրտինք եյինք թափում  
Յեա ու դու—  
Ինձ ու քեզ  
Յեվ ամենքի համար...

Այսոր,  
Պարանոցդ վեր չեա բռնում,  
Ինչո՞ւ:

Այսոր,  
Յերթըդ—մտամոլոր:  
Քայլերդ—դանդաղ:  
Ինչո՞ւ:

Այսոր,  
Ի՛մ սիրելի,  
Կարոտ չե՞ս շեմս-արեվին,  
Ինչո՞ւ:

Այսոր,  
Ո՞վ քեզ խլեց  
Ու բաժանեց ինձանից.  
Ինչո՞ւ,  
Ինչո՞ւ...

Պարանոցդ ծռած,  
Հայացքդ մոլոր ու մոլթ—

Ավազներին,  
Ո՞ւմ վոտքի հետքն ես վորոնում...

Ինչո՞ւ,  
Սիրելիս,  
Հայացքիդ մեջը թախիժ կա,  
Անաստղ գիշեր  
Ու բարկություն...

Ի՞նչ,  
Ոտար վոտների հետքե՞ր կան  
Ավազների վրա...  
Հարազատներիդ արյան շիթե՞ր կան  
Ավազների վրա...  
Այն վո՞ր ոտարականն եր նենգաժպիտ,  
Վոր վոտք դրեց շեկ ավազների վրա...  
Ու հարազատներիդ արյան շիթե՞ր կան  
Ավազների վրա...

Մեր արեվակեզ անապատներում,  
Այսոր,  
Հեռավոր ծովերի խոնավություն կա,  
Յեվ վոռնոցը հեռավոր ցամաքների...

Մեր անապատներում  
Ոտարականներ կան  
Ծովերի հեռավոր համպաներով յեկած...  
Ցամաքից ցամաք են անցել նրանք,  
Ծովից ծով են անցել  
Ու յեկել,—  
Ծովերից,



Ուր ջրշուններն են լողում:  
Ու մեր անապատների  
Բորենիներին միացած,  
Մարմինդ հոշոտե՞լ են ուզում,  
Սիրելի՛ս:

Այն ո՞վ եր,  
Վոր ծանր բեռ դրեց կռնակիդ:

Ի՞նչ,  
Հիմա համբույրիս փոխարեն  
Ոտարնե՞րն են քեզ մտրակում,  
Սիրելի՛ս:

Պարանոցիդ հպարտությունն ո՞վ կտորեց:  
Ի՞նչ,  
Ոտարները քեզ զրա՞ստ են կարծում...

Ասա՛,  
Սիրելի՛ս,  
Իմ քրտինքի,  
Պայքարի,  
Հրեմանքի  
Ու ճամպանների ընկեր,  
Յե՞րբ,  
Յե՞րբ վերջապես  
Թաղես պիտի ավազների տակ  
Ոտարի բեռները ծանր...

Յե՞րբ,  
Յե՞րբ վերջապես  
Պիտի կայծակի հայացքդ մոլթ...

Յե՞րբ,  
Յե՞րբ վերջապես  
Պիտի սողան հայացքիդ առաջ  
Բորենիներն անապատիդ հայրենի...

Յե՞րբ,  
Յե՞րբ վերջապես  
Ֆեսնեմ պիտի  
Պարանոցդ արեմին պարզած  
Դո հողմածուփ  
Յեմ շոգեկանչ նոր անապատների մեջ...

Յե՞րբ,  
Յե՞րբ,  
Յե՞րբ,  
Սիրելի՛ս:

1921—Բաղդադ



## ՅԵՐԿՈՒ ՍԵՐ

### 1

Ջեմիլե,  
Մետաքս ու շղարշ շորերով  
Կշորորաս դու:

Գունատ ու մերկ մարդիկ գործեցին  
Մետաքսն ու շղարշը բո...

Անսեր աղջիկներ նստած անբուն  
Գիշեր ու ցերեկ,  
Ցերեկ ու գիշեր—  
Կարեցի՜ն,  
Կարեցի՜ն,  
Կարեցի՜ն,  
Կարեցի՜ն  
Իրենց մատներովը մոմե...

Ջեմիլե,  
Վզիդ մարգարտե շա՞ր ես կապել:

Մարգարիտներդ  
Հատի՛կ-հատի՛կ.  
Վորբերի այտերից վար թափվող  
Արցունքների պես  
Հատի՛կ-հատի՛կ...

Ջարդարել ես բազուկներդ անաշխատ—  
Ապարանջաններով վոսկեղեն:

Ապարանջաններդ վոսկեղեն—  
Ո՞ւմ բրտինքն ե այն,  
Ջեմիլե:

Ձի՞ ճչում նրբանագ մեջքը բո,  
Ձի՞ սեղմում մեջքդ ալմաստե գոտին—  
Իր վորդուն թաղող  
Մոր բազուկների նման...

Մեր քաղաքի սիրունն ես դու—  
Ասում են:  
Ջեմիլե:  
Մեր քաղաքի գարունն ես դու—  
Ասում են:

Սիրունը սուլթանի՞ն միայն պիտի,—  
Ո՞վ ասաց:  
Դարունը վոսկո՞վ են միայն գնում,—  
Ո՞վ ասաց:

Ջեմիլե,  
Վանդակումն ե փակել քեզ բո տերը,  
Վոսկով ե գնել քեզանից բո սերը...



Դուրսը

Ազատ աշխարհ կա,

Դիտե՞ս դու...

Գոնե մի որ արեւի շողը տեսե՛լ ես.

Նոր կյանքի ծփանքը լսե՞լ ես...

Ջեմի՛լե,

Վանդակումն ե փակել բեզ քո տերը...

Ջահելները մեր քաղաքի

Յերդվում են,

Վոր փերինների փերին ես

Ջաննաթից փախած:

Մեր քաղաքի ջահելներն անաշխատ

Պալատիդ դռան թափառում են

Վորսկան շների պես—

Քե՛ղ համար:

Դո՛ւ

Ծերուկ սուլթանին համբույր տուր,

Փոխարեն արմատ ու հակինթ առ...

Դո՛ւ

Ծերուկ սուլթանին ժպիտ տուր,

Փոխարեն վոսկի ու զմրուխտ առ...

Յեւ հետո թառամիր,

Ինչպես նարգիզն ե թառամում

Զուրկ շողերիցը շեմսի...

Ջահելները մեղկ մեր քաղաքի—

Վորսկան շների պես,

Հոտոտան թող,

Ջեմի՛լե,

Փռչիները պալատիդ դռան:

Ջահելները մեղկ մեր քաղաքի

Թող հոտոտան

Այսոր,

Վաղ

Ու հետո—

Կգնան նրանք

Նեղ փողոցի այն յերկհարկանի տունը,

Ուր փափկամիս աղջիկներ

Ջնչին արժեքով

Ցնորք ու սեր են բաժանում...

Ջեմի՛լե,

Ձե՞ վոր դու ել

Վոսկով ես գգվում սուլթանին...

2

Մի աղջիկ կա:

Մի աղջիկ կա,

Վոր հոգումը մաղձ ունի,

Աչքերումը—շեմս արեւի...

Գահիրեյից Ալեքսանդրիա տանող

Ճանապարհի վրա

Քարեր ե ջարդում

Յերկաթուղագծի համար:



Արեւի տակ  
Քրտինքը  
Ճակատի վրա ցուքեր ե տալիս  
Շափյուղաների նման:  
Քարեր ե ջարդում ու բրբջում ե  
Բանվոր բարտաշների հետ:

Նրա կուրծքը վողորկ ե,  
Ինչպես տափաստանն Իրաքի:  
Յեւ յերկու գետեր կենսատու —  
Յեփրատ ու Տիգրիս —  
Հորդում են  
Ու ալեկոծվում այնտեղ...

Արեւի աղջիկ ե նա:  
Զրկանքը բրոնզեկ ե նրան:  
Նոր աշխարհի մայրությունը  
Յեռում ե հոգումը նրա...

Ճանապարհի վրա,  
Ամեն որ,  
Մարդկային իմաստուն կրքով  
Իրար ենք նայում անամաչ...

Որը մթնում ե:  
Լուում ե վարիչի մտրակի շաչը:  
Վերջանում ե աշխատանքը որովա:

Ու մենք,  
Յես ու նա —  
Ասում ենք իրար հուզված.

— Յե՛կ,  
Աչքի՛ս լույս,  
Գնանք ինձ մոտ,  
Թրջենք հացը ջրով,  
Ընթրենք:  
Յեւ հետո  
Միրենք իրար ազատ,  
Պա՛րզ —  
Արեւի պես,  
Հարեմից հեռու:  
Միրենք իրար աղմկոտ կյանքում —  
Մարդկային իմաստուն սիրով...

1921—Թեհրան



## ՍԹԱՄԲՈՒԼ

Սթամբուլը մի փաշա յեր յերեկ,  
Անունը Ոսման կամ Ալի:  
Յերկու ծովերի արանքում  
Փռել եր նախշուն մի խալի:  
Յեվ ծալապատիկ ծուլլ նստած,  
Քաշում եր համրիչը մարջանի:  
Ծխում եր նարգիլեն թամբաքով,  
Շոյում եր մորուքը յերջանիկ:  
Խմում եր կում-կում ու հանգով  
Խահվե՝ փարփուրե ֆինջանից:

Սթամբուլը մի խալիֆ եր խոժոռ—  
Մահմեդի ցեղիցը սերված:  
Կախված ցից բեղիցն ալլահի:  
Ուզեր՝ կդատեր գյավուրին.  
Ուզեր՝ կթամբեր ջորու պես,  
Վոր մեջքին նստած ծանրախոհ—  
Ալլահին նամազ ուղարկեր:

Սթամբուլը յերեկ «ջանը՝մ» եր,  
Հանրմ եր սիրուն, սեվաչյա—  
Կանգնած աշխարհի մեյդանում:

Շատերին իր տունն եր տանում,  
Բանում եր կուրծքն իր ճերմակ,  
Կամ վերմակը մահճի կակուղ...

Շատերին ֆալ եր բաց անում,  
Ցանում եր բախտ, ժպիտ, հարբանք,  
Ծախում եր աճուրդով եժան  
Թալիսման, համբուլը ու տարփանք...

Սթամբուլը մի բարձ եր բումբուլ:  
Նիրվանա: Հաշիշ: Որորանք:  
Մահով, մահիկով մինարա:  
Թամամ համամ եր ու շամամ:  
Շարբաթ եր: Շամպայն ու շանտան:  
Բանկիրը վո՞ր տեղի ու ցեղի  
Զգիտեր շանտանի այն համպան:  
Բանկիրը վո՞ր տեղի ու ցեղի  
Զի հարբել այն շքեղ շանտանում:  
Վո՞ր լորդը թեվանցուկ չեր տանում  
Սթամբուլ հանրմին տաք բաղնիք...

Յերեկ եր:  
Սթամբուլը—հնում:  
Քնում եր:  
Մնում եր խոր քնած:  
Այդ հինը հնումն ե,  
Քնումն ե:  
Յերեկ եր,  
Գնում ե,  
Վոր զնա՞ց...



# Կ Ա Լ Կ Ա Յ Ա

Իրիկունն իջավ: Գանգեսի վրա  
Փռվեց մեղմորոր մութե թեմ:  
Արմավենիներն իրիկվա հովին  
Դողացին կամաց ու թեթեմ:

Գանգեսի ափին քաղաքը հսկա—  
Կալկաթան՝ ժխորը սրտում:  
Կալկաթան, ասես, ռաջա մի փարթամ,  
Կալկաթան՝ փաթիր մի տրտում:

Սպիտակ քաղաքը մի դյուլթող հրաշք—  
Ձուգված, չարախինդ յեվ յեռուն:  
Սեվ Քաղաքը միշտ շրտնող ու մռայլ—  
Հայացքը խոժոռ, սեվեռուն:

Կալկաթան—յերկու բանակներ վոնց վոր,  
Կանգնած դեմ առ դեմ անգիջում:  
Անհաշտ յեվ համառ իրար են նայում,  
Հեվում են, ճշում ու վիճում:

Իրիկունն իջավ: Քաղաքի վրա  
Փռվեց մեղմորոր մութե թեմ:

Սպիտակ Քաղաքը անթիվ աստղերով  
Շողշողաց պայծառ ու թեթեմ:

Յեվ Ձորն Գերոյլդ փողոցը հիմի  
Թվում է հեքիաթ մի սիրուն:  
Շողում է, լողում ելեկտրո-գազի  
Հազար ու հազար լույսերում:

Ոթեններ հսկա յեվ ապարանքներ  
Շքեղ, բարձրածիգ, տիրական:  
Ապարանքներում՝ ռաջա ու միստեր,  
Վոնց վոր ջաննաթումն իրական:

Ջաննաթումը՝ կիրք, վիսկի ու շամպայն,  
Կանացի կրծքեր ու զիստեր...  
Ու քեֆ են քաշում տերերը Հինդի—  
Ռաջքումար, ռաջա ու միստեր...

Գիշերը իջավ: Սեվ Քաղաքն ահա  
Պարուրեց կամաց մութը խոր:  
Հյուղերումն անշուք մարեցին մեկ-մեկ  
Լույսերն առկայծող ու ժխոր...

Կանգնած կողք-կողքի հյուղակները մութ,  
Տնակները լուռ յեվ անող,  
Վոնց վոր բախտակից, մի մորից ծնված,  
Իրար հարազատ ու ծանոթ...

Խավարումը խոր անթարթ աչքերով  
Նայում են խոժոռ դեպ հեռուն:  
Նայում են դեպի Սպիտակ Քաղաքը,  
Ուր հաճույք ու կիրք է յեռում...



Այնտեղ մեղկ ռաջան, միստերն ու միան—  
Տերերը Հինդի յեվ վոսկու,  
Իշխում են այսոր, թալան են անում,  
Ժպտում են, հարբում յեվ սոսկում...

Զգում են նրանք, վոր կգա մի որ  
Վրեժի, պայքարի մահատու,  
Յեվ վոտքի կելնի խեղճ խալխը Հինդի  
Հարվածով քանդող յեվ հատում...

Դիշերն ե իջել: Գանգեսի վրա  
Փռվել ե հիմի մութ թեվ:  
Կալկաթան հիմի հեվում ե, տնքում,  
Ժպտում ե լպիրշ ու թեթեվ...

1928—Յերևան



### Բ Ո Մ Պ Ե Յ

#### 1

Մով ծովը ծփում ե անքուն:  
Բոմպեյի ծովափը՝ յեռուն:  
Շոգեվար նսվերն են կանգուն  
Ծովափին մոտիկ ու հեռուն:

Հեռավոր աշխարհից դարձած,  
Բեռները ափին են թափել:  
Յեվ կրկին նոր բեռներ բարձած,  
Մեկնում են հեռավոր ափեր:

Բերել են անհամար բեռներ,  
Վոր Հինդի սրտումը թափեն...  
Վոր Հինդի խեղճ խալխին բռնեն  
Ու մեկին հարյուրմեկ խաբեն...

Յեվ ահա նորից բեռնում են  
Մեծ Հինդի քրտինքը աժան...  
Իսկ Հինդում մարդիկ մեռնում են—  
Ժանտախտից յեվ սովից դաժան...



Բոմպեյը՝ մի մռայլ վկա,  
Հայացքը՝ վրեժի շանթով...  
Ո՛ր, վրեժի սեծ որը կգա,  
Յեվ կիջնի հարվածն իր քանդող..

Յերբ շարժվեն բանականները կուռ,  
Ո՛ր, այնժամ, յեվ այնժամ միայն  
Կսողան գետնաքարը ու լուռ  
Ռաջբուհար, միստերն ու միան...

Կցնդեն Նիրվանան, Բուդդան,—  
Առասպել հնամյա յեվ սուտ...  
Բանվորները քացի կուտան  
Մաուլուդ Շերիֆին մեղսուտ...

Կլինի հատուցումը մեծ,  
Կլինի տոնական հանդես...  
Ով Հինդի արյունը խմեց,  
Կլինի մոխրացած, անտես...

Մով ծովը ծփում է անքուն:  
Բոմպեյի ծովափը՝ յեռուն:  
Շոգեվար նավերն են կանգուն  
Ծովափին մոտիկ ու հեռուն:

Նավերի թեվերը բարձող  
Յեղնում են, իջնում են, դառնում.  
Ծովափիցը արագ դարձով  
Բեռները նավումն են առնում:

Ծովափը հեվում է, վռոնում:  
Բազմություն, անցուղարձ ու վազը:

Ծովափը իրար է խառնում  
Գույները, ցեղերը յեվ ազգ..

Անցորդներ սալիտակ, դեղին.  
Թխամորթ, խառնածին ու սեվ...  
Նառնուրդները ամեն ցեղի,  
Ամեն գույն, ամեն տեսք ու ձեվ...

Վազում են հեվքոտ, վիճում են:  
Ճշում են բարձրածայն յեվ խուլ...  
Ժպտում են իրար, զիջում են,  
Քայլում են հուսահատ, տխուր...

Յես կանգնած հեվքոտ ծովափին՝  
Նայում եմ նավերին բեռնող.  
Նվում է տոթաշունչ քամին,  
Վոնց հնդիկ մի ֆաբիր մեռնող:

Յեվ կանգնած լուռ միտք եմ անում:  
Ծովումը ծփանք ու քամի:  
— Թալա՛ն է, բեռնում են, տանում  
Բեռները քանի՛ ու քանի՛...

Բեռները բարձած տանում են  
Դեպ Բասրա, Մանչեստեր, Մարսել:  
Արյունը Հինդի բամում են,  
Ուզում են անպատիժ մարսել...

Յեվ կանգնած ծովափին հիմի,  
Հոգումըս վառ ցասում, ամոթ...  
Հինդը հին՝ խավար բանտ է մի—  
Ժանտատես, մահատուռ, անող. .



Ե՛յ,  
Բո՛մպեյ,  
Բո՛մբ ես դու:

Հին Հինդի սրտում—  
Դո՛ւմ—դո՛ւմ—դո՛ւմ  
Բոմբ ես դու,  
Ե՛յ,  
Բո՛մպեյ:

Թե թնդաս դու թափով—  
Լափող բոցերիդ դիմացողն ո՞վ..

Թե թնդաս դու թափով—  
Ավերն ու դավերը  
Ցեղ ցավերը դառն  
Կդառնան թո՛ղ,  
Ե՛յ,  
Բո՛մպեյ:

Արդե՛ն,  
Արդե՛ն,  
Արդե՛ն  
Վառվում են պատրույգներդ բոմբի...

Կրակ են առել,  
Վառվել են  
Պատրույգներդ բոմբի...

Պատրույգիդ կրակ տվողը—շա՛տ...

Ծովափիդ շարք շարված  
Շոգեթոք նավերիդ մատրոսները,  
Շոգեվազ քարվանիդ մեքենավարը,  
Ծխհաններիդ ծուխ տվող բանվորը,  
Վո՞րն առեմ,  
Վո՞րը,  
Ե՛յ,  
Բո՛մպեյ:

Լորդն ու ռաջան ու միան—  
Տերերդ ո՞ճ,  
Վորոնք խոց են տվել քեզ,  
Պիտի սողան,  
Դողան  
Կրունկի տակը 300,000,000-ի:

300,000,000-ի սրտում  
Դո՛ւմ—դո՛ւմ—դո՛ւմ  
Պիտի թնդաս,  
Վորոտաս  
Ու տաս հին Հինդին արե՛վ,  
Ե՛յ,  
Դու բո՛մբ,  
Բո՛մպեյ:

Կլինի՛,  
Կլինի այդպե՛ս,  
Վե՛ս Բո՛մպեյ:



Գալիք  
Ռմբագրու որերիդ համար,  
Գալիք  
Ամրակուռ նորերիդ համար,  
300,000,000-ի տոնի համար  
Ռմբածիգ յերգ եմ պահել,  
Ե՛յ,  
Դու բո՛մբ,  
Բո՛մպեյ,  
Լենինի յերկրից սալա՛մ ձեզ...

1921.—Մոսկով



## ԻՐԱՆՆԱՄԵ

### 1

Չահի յերկրումը  
Սիրատենչ մարդերը—շա՛տ,  
Խայամի սիրտը  
Խորովող յարե՛ր ել կան...  
Դյուլիստանումը  
Նորաբաց վարդերը—շա՛տ,  
Յարի գովքը  
Յերգող թառի լարե՛ր ել կան...

Շահնշահի  
Պալատումը գերիքը—շա՛տ,  
Ալմաստ, մարջան,  
Բյուր թանգազին բարե՛ր ել կան...  
Դալար մարմնով  
Ու կիսամերկ փերիքը—շա՛տ,  
Ոձագալար  
Յեվ նազորոր պարե՛ր ել կան...

Խանի քյոշկումը  
Թառ ու սագ, կանչերը—շա՛տ,



Կնոջ թովբի,  
Գինու գովբի յերգե՛ր ել կան...  
Սեվ աչքերով  
Աղջիկներ ու մանչերը—շա՛տ,  
Հինա դրած  
Ծուփ ծամեր ու ձեռքե՛ր ել կան...

Թեհրանումը  
Վոսկի, արծաթ, լալերը—շա՛տ,  
Խուրմա, բաղամ  
Յեվ քիշմիշի լեռնե՛ր ել կան...  
Խաս խալիչա,  
Քիրմանշահի շալերը—շա՛տ,  
Աբրեշումի  
Յեվ ատլասի բեռնե՛ր ել կան...

2

Շահի յերկրումը  
Թառամած վարդե՛ր ել կան,  
Վիշտ ու թախիծ  
Յերգող թառի լարերը—շա՛տ...  
Շահի յերկրումը  
Կիսաքաղց մարդե՛ր ել կան,  
Սերի կարոտ  
Յեվ անարեվ յարերը—շա՛տ...

Հարեմներումը  
Մուրրված փերի՛ք ել կան,  
Մահվան դողովը  
Գալարուն պարերը—շա՛տ...

Մութ բանտերումը  
Մահացող գերի՛ք ել կան,  
Ջնդան-բանտերը  
Պարսպված, քարերը—շա՛տ...

Հաց մուրացող  
Աղջիկներ ու մանչե՛ր ել կան,  
Աշխատանքումը  
Կոշտացած ձեռքերը—շա՛տ...  
Արեվատենչ  
Ու վրեժի կանչե՛ր ել կան,  
Քյոշկերի դեմը  
Ծառացող յերգերը—շա՛տ...

Սոված խալիսի  
Ձեռքով հյուսված շալե՛ր ել կան,  
Ծովերից դենը  
Գնացող բեռները—շա՛տ...  
Ծով արցունքից  
Քամված փերուզ, լալե՛ր ել կան,  
Դիակներից  
Կանգնած բուրգեր-լեռները—շա՛տ...

3

Ջահել դու իմ ջա՛ն աղջիկ,  
Փարփուրե փինջա՛ն աղջիկ,  
Գործում ես դու խաս խալի—  
Գարուններ յեվ քանի՛ ամառ...  
Կամար ունքերո՛վ աղջիկ,  
Խումար աչքերո՛վ աղջիկ,



Գործում ես դու խառ խալի  
Շահի ու խանի համար...

Շաֆրան Իրանի՝ աղջիկ,  
Հագած ծիրանի՝ աղջիկ,  
Կարիքն ե դուռդ ծեծում,  
Տանջում ե հոգիդ համառ...  
Տխուր ու թախծո՞ղ աղջիկ,  
Բանվոր ու քաղցո՞ղ աղջիկ,  
Նստիր դազգյահի առաջ,  
Գործիր՝ ապրելու համար...

Որերդ հաշվո՞ղ աղջիկ,  
Տժգույն յեվ մաշվո՞ղ աղջիկ,  
Խալիդ՝ թելերով նախշուն,  
Գույները պես-պես, անմար...  
Մոմե մատներո՞վ աղջիկ,  
Արեվ վատնելով, աղջիկ,  
Գործում ես նախշուն խալի՝  
Փարթամ տերերի համար...

Դու ֆարս ու տոկո՞ւն աղջիկ,  
Դու պարզ ու խոկո՞ւն աղջիկ,  
Մռայլ ես, ինչպես շանթող  
Ամպոտ յերկնքի կամար...  
Դու նոր Իրանի՝ աղջիկ,  
Քեզի յերանի՞, աղջիկ,  
Գործում ես հրաշք-խալի  
Գալիք որերի համար...

1921—Քիմաշուհ

## ԼԱՍՏԱՆԱՎՈՐԴՆԵՐ

Ի՞մ լաստ,  
Դողալով մի՛ գնա.  
Շողալով,  
Հողալով գնա,  
Մի՛ դողա.  
Դողալը  
Լքվածների յեվ թուլների համար ե:  
Ցես ու դու միասին  
Մեր հակատագիրն ենք դարբնում:  
Ո՞վ կասի մեզ,  
Վոր յես ու դու հիմարներ ենք...

Հեյ հե՛յ,  
Լաստս ձգել եմ ջրերի վրա,  
Ու ինձ տանում ե:  
Բախտս  
Անհայտ հակատագրին չեմ հանձնի.

Բռնել եմ ձեռներումս ամուր  
Թիերը զույգ:



Ու վարում եմ առաջ  
Իմ լաստն ու բախտը,—  
Իմ հակատազիրը...

Լաստս  
Հորդ գետերի վրա—  
Ինձ տանում ե հեռուն:  
Լաստս տանում ե ինձ  
Դեպ ովկիանն անծայր,  
Ուր թափվում են  
Աշխարհի գետերը բոլոր,  
Աշխարհի բրտինքը բոլոր...

Հիմի,  
Այս ժամին,  
Դիտեմ,  
Բոլոր գետերի վրա,  
Վոր կան աշխարհում,—  
Շողում,  
Լողում են  
Լաստանավեր հազար ու հազար...  
Լողում են առաջ  
Լողվորներ միլիոն  
Ու կրկին միլիոն...

Նրանք,  
Վոր ուժ ունեն բազուկներումն իրենց  
Յեվ հոգիներում՝ բեն.  
Նրանք,  
Վոր զիտեն շարժել թիերն իրենց  
Ճարպիկ ու քաջ,—

Հիմի,  
Այս ժամին  
Ամենքը,  
Ամենուր  
Շողում են առաջ,  
Լողում են առաջ  
Դեպի քրտնողների անծայրածիր  
Ու մրկվող ովկիանը...

Վերջ չկա՛,  
Ծայր չկա՛  
Ու համրանք—  
Հանդուգն լողվորների,  
Լաստանավերի...

Յեվ ամեն մի լաստանավ  
Բեռնած հակերով ցատում,  
Ամբարած լախտահար բռունցք, —  
Շողում ե,  
Լողում,  
Վոր հասնի մի որ հսկա ովկիանին...

Յեվ այն ժամանակ  
Վա՛յ ջրշուններին,  
Ջրազայլերին,  
Վորոնց կզակները կզգան  
Հարվածները շաչող թիերի...

Հեյ հեյ,  
Լաստս ջրերի վրա յեմ ձգել:



Ու համապան գիտեմ յես,  
Այնպես,  
Ինչպես գիտե  
Բանակի հրամանատարը  
Ռազմագծերը թշնամու...

Յեվ մթին գիշերում  
Հսո՛ւմ եմ,  
Հսո՛ւմ եմ  
Հեռավոր գետերի վրա շողացող,  
Լողացող  
Իմ յեղբայրների,  
Սրտակիցների,  
Իմ ընկերների շաչող թիերի զարկը  
Պղտոր ջրերի կրծքին,—  
Իմ ընկերների,  
Վորոնք  
Գալի՛ս են,  
Գալի՛ս են,  
Գալիս  
Ձուլվելու հուզված սրտին  
Մեծ ովկիանի...

1919—Թիֆլիս



## ԱՐԵՎԵԼԲԻ ՓՈՂՈՑՈՒՄ

Շերացած,  
Վերացած  
Ու քնկոտ,  
Հայն ջուրբա հազած իմամի նման—  
Կանգնած ե մզկիթը հնամյա  
Փողոցումն ել Շարքի:

Ինչպես գանկը Հասան-Հուսեյնի  
Հոշոտված,  
Փոշոտված  
Խուլ  
Ու խարխուլ—  
Կանգնած ե մզկիթը հնամյա  
Փողոցումն ել Շարքի:

Մինարան նրա,  
Ինչպես ծուռ ու ժանգոտ մեխ—  
Խրվել ե  
Յերկնքի կրծքին մով:

Հե՛յ,  
Արեվելքը  
Արեվերգ ե հիմի...



Հէ՛յ,  
Արեւիկէքը  
Բարեւերգ ե հիմի...

Փողոցները  
Յեռք  
Ու յերգ են հիմի...  
Ձայների ցանց,  
Հպանք  
Ու ծփանք են հիմի...

Մինարի կոկորդիցը ծուլլ՝  
Թո՛ւյլ ե հնչում.  
—Լա՛ ի՛լ ալլա՛ա՛ա՛հ—  
Իմամի կանչը հիմի...

Դեմ առ դեմ մինարի՛  
Արի  
Ծխնելուզն ե կանգուն ..  
Ծխնելուզը  
Հրծիգ  
Անրուն,  
Վերծիգ...

Ուխա՛ա՛ա՛յ,  
Ծխում ե դալանը շոգեհամ.  
Յեւ հավաքած բկում  
Սեւ թուքն ե թքում  
Մինարի գանկին լերկ:

Ամեն առավոտ-իրիկուն,  
Յերբ նորի՛ց  
Ու նորի՛ց  
Ու նորի՛ց իմամ Իդրիսը  
Հորանջում ե մինարից.  
—Ալլա՛հ երբա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ր,—

Ծխնելուզն ել աժդահա  
Ահա՛  
Սուլում ե սո՛ւր-սո՛ւր.  
—Մինարա՛,  
Զո՛ւր,  
Զո՛ւր,  
Զո՛ւր.  
Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ,  
Փա՛ս, փա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ս:  
Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ,  
Սո՛ւս, ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛:

Յեւ հանկարծ,  
Ասես,  
Մեկից  
Մինարին տալիս են մի կից:  
Խեղդվում ե ճիւղ մինարի բկում:  
Իմամն իր կուրծքն ե ծեծում,  
Հեծեծում.  
—Եստափրուլլա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛հ:

Ահա՛  
Զիւ



Սուր  
Սուլում ե սուլիլը ծխնելույզի:

Հիմի՛  
Ել Շարբի ալամը շա՛րք-շա՛րք  
Ջամի գնացողը չի՛,  
Ջամումն աղոթողը չի՛...

Հիմի՛  
Ել Շարբի ալամը շա՛րք-շա՛րք  
Շարժվում ե շտապ  
Դեպի շոգենամազ,  
Դեպի շոգենհանդես վես...

Արեվելքի արեվվառ փողոցում,  
Կանգնած դեմ դեմի,  
Վոնց վոր դուշման,—  
Մինարան բավթառ,  
Իմամ Իդրիսի նման,  
Ծխնելույզն աժդահա  
Մեքենավար Ջամիլի նման—  
Արեվելքի արեվվառ փողոցում,  
Կանգնած դեմ դեմի,  
Վոնց վոր դուշման...

Յեվ ամեն առավոտ-իրիկուն,  
Յերբ զառանցում ե  
Անատամ ծերուկը—մինարան,  
Ջահել Ջամիլ—ծխնելույզը  
Ջիզրու յերգում ե

Սո՛ւր-սո՛ւր.  
—Մինարա՛,  
Ջո՛ւր,  
Ջո՛ւր,  
Ջո՛ւր,  
Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ,  
Փա՛ս, փա՛սա՛սա՛սա՛սա՛ս:  
Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ,  
Սո՛ւս, ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս...

1923--Թիֆլիս





## ԴԵՐՎԻՇԸ

Հեռո՛ւ հեռուներից

Մի դերվիշ յեկավ:

Նրա կոշիկների վրա նստել է դեռ

Հեջազի արեվատապ

Ավազների փողին:

Իջել է նա մեծ սրճատունը քաղաքի,

Մեծ սրճատունն արաբական,

Վոր բացվում է նեղ փողոցի վրա:

Շուրջն է հավաքել

Վոսկրացած,

Սոված,

Քրտնող

Յեվ անոթեվան բազմությունը:

Շուրջն է հավաքել

Ու պատմում է

Լեյլու-Մեջնունի սիրո մասին, —

Թե ինչպես սիրեցին նրանք,

Իրար սիրեցին

Ու մեռան...

Հե՛յ,

Բաբա՛ դարվիշ,

Մեզ ի՞նչ

Լեյլու յեվ Մեջնունի համբույրը:

Մեզ ի՞նչ

Վարդի յեվ լոտոսի բույրը:

Մեզ ի՞նչ

Հուրինների փերինների հրապույրը:

Անցել ես դու

Շատ ու շատ յերկրներ:

Շրջել ես դու

Գանգեսի ափերին ձիգ:

Տեսել ես դու

Իրաքի հարթավայրն արեվոտ

Յեվ գրկախառնումն Յեփրատ-Տիգրիսի:

Հե՛յ,

Բաբա՛ դարվիշ,

Մեզ ի՞նչ

Լեյլու յեվ Մեջնունի յերգը...

Ուզում ենք մենք լսել

Գանգեսի հառաչի

Յեվ շառաչի մասին,

Տիգրիսի ու Յեփրատի

Արնագույն հոսանքի մասին,

Արեվելքի

Անարեվ մարդկանց մասին,

Հեռավոր աշխարհների

Փոթորկվող հոգիների մասին...



Հե՛յ,  
Բաբա՛ դարվիշ,  
Մեզ ի՞նչ  
Լեյլու յեվ Մեջնունի յերգը...

Նեղոսը,  
Գանգեսը,  
Տիգրիսն ու Յեփրատը  
Բախտընկերներ են...  
Չորսն ել ցատում ունեն ու ճիչ ..

Ուզում ենք մենք լսել  
Այն տեղերի մասին,  
Ուր վորքա՛ն,  
Վորքա՛ն շղթայվածներ կան՝  
Կյանքի ու մահվան մեջ գալարվող:

Հիմի,  
Լեյլու յեվ Մեջնունի յերկրումն իսկ,  
Ուր սերն եփան ե այնքան,  
Վոր կաչում ե մարդկանց վոտներին,—  
Ո՞վ սիրտ ունի  
Սեր ու տարփանք տենչալու...  
Բոմպեյի ծովափում,  
Մանիդայի յեվ Փենջապի բացուտներում —  
Հիմի  
Չարքաշ,  
Գրաստված  
Ու մոլեգնող մարդկանց հոգիներում՝  
Մե՞րն ե բացել իր շուշանները,  
Թե՞ վրեժի,

Ցասման  
Յեվ ազատության  
Վորոտացող ամպրոպ կա...

Իսկ այստեղ—  
Մեր յերկրում,  
Ուր յերբեմն  
Դահիճ փարավոններն են իշխել,  
(Հիմի ել դեռ կա՛ն, դեռ կա՛ն),  
Սերը սիրող իմաստակ չես գտնի  
Խրճիթներում կծկված մարդկանց մեջը...

Հե՛յ,  
Բաբա՛ դարվիշ,  
Մեզ ի՞նչ  
Լեյլու յեվ Մեջնունի յերգը...

Հիմի մենք կարոտ ենք այն յերգչին,  
Վոր  
Սեր չլինի՛ նրա յերգը,  
Խինդ չլինի՛ թող.  
Գուն չլինի՛ նրա յերգը  
Յեվ վոչ ել հաշիշ:  
Մեզ ուրիշ յերգ պիտի,  
Կրակ ու հրեղեն յերգ պիտի...

Յեվ այն ժամանակ  
Հազար ու հազար մարդիկ  
Գատաղի խրխինջ կարծակեն—  
Ինչպես



Ազնիվ նժույզն արաբ բեդվինի,  
Վոր պատրաստվում ե արշավի:

Հիմի մենք կարոտ ենք այն յերգչին,  
Վոր յերբ շրջի Հեջազն ու Փենջապը,  
Իրաքն ու Չինը,

Յերբ շրջի յերկրից յերկիր,  
Հեռո՛ւ ու հեռո՛ւ տեղեր—

Շուրջը հավաքի

Մուրի

Յեվ մրուրի մարդկանց

Յեվ յերգի նրանց

Խրխնջացող

Ու հրաթուիչք նժույզների յերգը,—

Ըմբոստ նժույզներ,

Վորոնք

Այսոր կամ վաղ լուսաբացին

Արշավեն պիտի

Վիշապների դեղին արքայի դեմ...

Հիմի

Լեյլու յեվ Մեջնունի հեքիաթը

Հնացե՛լ ե...

Թող պատմի նրանց

Խրխնջացող նժույզների մասին,—

Վորոնք

Իրենց պողպատե սմբակներովն արդեն

Արագ,

Ամուր

Հանուր աշխարհի գետինն են դոփում...

Հե՛յ,

Բաբա՛ դարվիշ,

Մեզ ի՞նչ

Լեյլու յեվ Մեջնունի յերգը...

1921—Թեհրան





## Դ Ր Ա Խ Տ

**Ուրբաթ.**

Խալիֆ Ֆաթիհի յզկիթում  
Իմամը ծեր  
Մարգարեյի գիրքն է կարդում:

Հավատացյալները բոլոր  
Հսում են նրան անշշուկ  
Ու շարժում են ջերմեռանդ  
Իրենց գլուխները ծանրաբեռ:

Իմամը կարիք չունի՝  
Թերահավատ ունկնդիրների:  
Իմամը կարիք չունի՝  
Իմաստուն մարդկանց...

Իմամը առատածեռն է,  
Առատածեռն է ու բարի,  
Տեղ է տալիս ամենքին  
Հանդերձյալ լայն աշխարհի  
Դրախտումն յերանավետ.—  
Ուրտեղ  
Հուրիններ-փերիններ պես-պես,

Սպիտակ,  
Խարտյաշ  
Յեվ սեվաչվի—  
Շոյեն պիտի քնքշորեն  
Մորուքը ջրկիր Ֆեյզալի:  
Կամ  
Ոմարի կմախքացած մարմինն  
Պիտի փարվի տարփանքով  
Ջաննաթի աղջիկների  
Սիրուններից սիրունը կրքոտ...

Դրախտումը որորանք կա,  
Վայելք,  
Հեշտանք  
Ու հրաշք,  
Հազար ու մեկ գիշերների  
Հեքիաթները դյուրթական. .  
Դրախտումը  
Հուր հարբանք կա,  
Տարփանք  
Ու սեր—  
Կնոջ մարմնի պես տաքուկ...

Դրախտումը յերանական  
Բույրերը նուրբ,  
Անուշավետ  
Գզվե՛ն պիտի,  
Գզվե՛ն պիտի  
Ախուռապան կամ ուղտարած  
Խեղճ ֆելահի քիթը—գզվե՛ն...



Դրախտումը արեվաշող—  
Մետաքս շապիկը վռսկեծոպ  
Պիտի ծածկի,  
Պիտի շոյի  
Խեղճ Ռահիմի մարմինը մերկ ..

— Բիսմ իլլահ ռահմահ ռահիմ,  
Ալլահ,  
Մուհամմադ,  
Հասան,  
Հուսեյն...

Ծերուկ իմամ մարգարեյի գիրքն է կարդում  
Յեվ լսում են հավատացյալները  
Խոստումը մեծ մարգարեյի,  
Վոր հնչում է իմամի բերնով:

Նրանք,  
Վոր կյանքում որ չեն տեսել,  
Նրանք,  
Վոր ցնցոտիներ ունեն հագին,—  
Ինչպես հարբած՝  
Յերազանքի գիրկն են ընկնում  
Յեվ որորվում են յերազով,  
Ասես,  
Նրանք տեղն ու տեղը  
Նստած են այգումը ջաննաթի . .

— Լա իլ ալլահ,  
Մահամադ ռահս ուլ ալլահ...

Հանկա՛րծ,  
Հանկա՛րծ  
Մզկիթումը  
Մի բարձր,  
Խրոխտ ծայն է հնչում:

Մարդկանց միջիցը աղոթող  
Կանչում է մեկը բարձրաձայն.  
— Լսե՛ք, լսե՛ք, ե՛յ, լսե՛ք դուք,  
Մեր իմամի բերնովն ահա  
Ճշմարտությունն ինքն է խոսում...

Այնպես,  
Ինչպես նա յե պատմում  
Այն աշխարհի դրախտի մասին,  
Ո՛ր, ճիշտ այնպես հրաշք-դրախտ  
Յես տեսել եմ  
Յերկրի վրա...

Ահա այստեղ,  
Մեր քաղաքում,  
Ուր  
Մուրացկանների,  
Արտասովորների,  
Աշխատողների  
Ու զրկվածների թիվն  
Անթիվ է,—  
Ահա այստեղ,  
մեր քաղաքում,  
եւ Մաշհուր մեծ փողոցի վրա  
Բարձրանում է պալատը շիք,



Մարմարակերտ՝  
Խալիֆ Ֆաթիհի:

Այնպես,  
Ինչպես իմամն ե պատմում  
Մեզ անձանութ ջաննաթի մասին,—  
Ո՛ր, հիշտ այնպես հշմարիտ ե  
Խալիֆ Ֆաթիհի պալատը մեծ...

Լսե՛ք,  
Լսե՛ք,  
Ահա յեվ յես  
Պահապանն եմ այն պալատի—  
Վարձու ստրուկ,  
Ա՛յ,  
Այս գույգ աչքովս տեսել եմ միշտ,  
Հազար անգամ—  
Գեղամարմին փերինները  
Վոսկեքանդակ դահլիճումն այն պալատի...  
Մերկ ու կրքոտ փերինները,  
Վոր ցատկելով ծնկի վրա խալիֆ Ֆաթիհի  
Գալարվում են  
Ճկու՛ն,  
Ու ջե՛րվ,  
Ոձագալար մարմիններով:  
Յեվ շոյո՛ւմ են  
Յեվ փաղաքշում  
Խալիֆ Ֆաթիհի  
Ցից-ցից,  
Ցանցառ,  
Սպիտակ մորուրը...

Իսկ յես շոյվել եմ շա՛տ անգամ  
Հարվածովը տիրոջս մտրակի,  
Փերիններից յեվ վոչ մեկը  
Ջշոյեց մորուրիս մի թեղն անգամ...

Սո՛ւտ ես ասում,  
Իմա՛մ,  
Սո՛ւտ ե...  
Ջե՛,  
Իմ հոգին չի գնա յերբեր  
Ինչ-վոր ջաննաթը հեռավոր...

Մտրակը բիրտ  
Թող վոսկորներս չշոյի ..  
Թող չթրջվի կերած հացս  
Իմ արցունքով...

Մենք չենք ուզում,  
Դրախտը հեռավոր...  
Ո՛ր, այս յերկրում  
Դրախտներ այնքա՛ն...  
Դրախտներ այնքա՛ն,  
Վորի դռները փակ են  
Խեղճի առաջ...

Այս յերկրի դրախտին եմ կարոտում:  
Սո՛ւտ ե,  
Իմա՛մ,  
Մի այլ աշխարհ,  
Մի այլ դրախտ  
Ջկա՛,  
Ջկա  
Մարդու համար...



# Ծ Ո Վ Ը

Աֆիոնով մի՛ թմրիր՝ թե տանջվում ես,  
Հաշիշով մի՛ բնիր, յեղբայր իմ...

Ասում ես—

Պղտո՞ր ե կյանքի ծովը:

Լինի՛ թող:

Իսկ դու

Պառկել ես ծովափի՞ն:

Ծովափի յերագիցը բո շահն ի՞նչ

Ավազի վրա ծովափնյա

Անշունչ դիակներ փռվեն թող...

Տե՛ս,

Անձիր ծովը

Հորձանը

Ու փորձանը ե...

Ասում ես—

Մա՞հն ե բրբջում հորձանքում:

Լինի՛ թող:

Պայքարի բերկրանքին ծանոթ ես,  
Յերբ կուրծքդ ուռչում ե,  
Հայացքդ թռչում ե...  
Յերբ բազուկդ գույգ  
Ճեղքում ե ալիքը վայրագ...

Լա՛վ ե,

Ո՛ր, լա՛վ ե մեռնես հորձանքում,

Քան թե ձգված ծովափին

Ծանր ու ծուլլ անրջես...

Աֆիոնով մի՛ թմրիր՝ թե տանջվում ես,  
Հաշիշով մի՛ բնիր, յեղբայր իմ...

Ծածուկ ծմակից,

Ծերպերից,

Ծանոթ,

Անձանոթ ձորերից

Վտակներ վարար,

Դետեր փրփրաբաշ,

Ջրվեժներ շաչող—

Մեկ-մեկ,

Կողք-կողքի

Գալի՛ս են,

Գալի՛ս,

Հսկա աշխարհի լայն տափաստանում

Իրար են ձուլվում

Ծափ ու ծփանքով

Յեվ շառաշում են հուժկու,

Միասին...



Թեվիցդ բռնեմ:

Վե՛ր կաց,

Դեպի ծո՛վ:

Անգլո-Պարսկական Նավթընկերության  
Փայատե՞ր ես դու,  
Խալիֆ Հյուսեյնի վորդի՞ն ես գուցե.  
Բաղդադի Շարիֆի վոսկու տե՞րն ես դու...  
Շարիֆի ուլտերի բարվանդ  
Զգվում ե  
Բաղդադից Կասր Շիրին,  
Քիրմանշահիցը՝ Թեհրան,  
Բասրայիցը մինչ Բեյրութ...

Իսկ դո՛ւ

Իսկ դո՞ւ...

Վե՛ր կաց,

Յեղբայր իմ,

Ին՞չ ես տատանվում,

Ափսոսանքի ի՞նչ ունեւ,

Վոչի՞նչ,

Ուրեմն

Դեպի կյանքի ծովը ծփուն...

Հաշիշ չլինի թող հոգիդ,

Վոռնացող հովազ լինի թող—

Սուր-սուր ու հոշոտող ժանիքներով...

Մի՛ որորիք հոգիդ աֆիոնով,

Վորոտացող ամպրոպ լինի թող—

Վառ ու հրկիզող շանթերով...

Քեզ խարազանել են կոպտաբար.

Շղթաների վերքերը վոտներիդ վրա խորն են դեռ.

Ձեռներդ կոշտ են ու բրոնզված.

Մի՛ զույգ բազուկ ունեւ

Յեվ ուրիշ վոչինչ,

Վոչի՞նչ,

Ուրեմն

Իմ յեղբայրն ես դու,

Յեւ—ընկերը բո...

Վե՛ր,

Թեվիցդ բռնեմ

Դեպի կյանքի ծովը ծփուն.

Աֆիոնով մի՛ թմրիր՝ թե տանջվում ես.

Հաշիշով մի՛ քնիր, յեղբայր իմ:

1922—Յերևան



## ՀԱՐԵՄԻՑ ԴՈՒՐՍ

Հարեմից դուրս փախչող  
Հարճի պես դեռահաս,  
Կարոտ՝ վառ կյանքի ու սերի,  
Արանքիցն ամպերի  
Լուսինը դուրս սողաց,  
Մազերը ցանցիր ուսերին:

Համարձակ քայլում ե  
Յերկնքիցը կապույտ  
Դեպի հեռուներն արեվի,  
Ու համպին աստղերը—  
Ջահեղներ շրջմուխ,  
Շարքով կանգնել են բարեվի:

Ո՛, վորքա՜ն ե տանջվել  
Ամպահյուս քողի տակ,  
Տանջվել հարեմի յեսիրում,  
Ապում ե փաղաքշանքն  
Ստրուկի, իշխողի,  
Միայն արեվին ե սիրում:

Սիրում ե նա միայն  
Արեվին աշխատող—  
Ինչպես մի բանվոր տիտանի,  
Սիրում ե նա միայն  
Արեվի սերը վառ,  
Սե՛րը աշխարհին պիտանի:

Քողազերժ ու հպարտ,  
Հարեմից դուրս փախած,  
Կարոտ՝ արեվի ու սերի,  
Յերկնքիցը կապույտ  
Լուսինը քայլում ե  
Մազերը ցանցիր ուսերին:

1920—Սևաստոպոլ



# ԱԶՐԲԵՅՁԱՆ

1

Ջա՛ն,  
Ազրբեյջա՛ն,  
Եյ ջա՛ն,  
Իգի՛թ ես հիմի,  
Ջահե՛լ:  
Վառել ես  
Բյուրամոմ ջահեր,  
Վառել ես  
Շող,  
Շեմս-արեվ:  
Ջա՛ն,  
Ազրբեյջա՛ն,  
Եյ ջա՛ն,  
Սաբահ խե՛յր,  
Սալա՛մ,  
Բարե՛վ:

Պարզել ես  
Բազուկդ կուռ

Դեպի  
Քերբելա,  
Մերթա:  
Բանտում ես  
Ալլահը ծեր,  
Քանդում ես  
Մինարա,  
Մզկիթ...  
Դրել ես  
Մի չիսուս,  
Ալի —  
Պողպատե սալի վրա,  
Ծեծում ես  
Մուրճովդ ամուր  
Յեվ շինում  
Անիվ,  
Մոտոր...

Խփի՛ր  
Իրանի դռան  
Կռանդ հուժկու  
Յեվ կուռ,  
Քանդի՛ր  
Ամրոցները փակ.  
Քանդի՛ր  
Լուսամուտ  
Յեվ դուռ...

Թող շահի-մահի յերկրում  
Տարածվի բերկրում,



Ծնծում.  
Թող վոխ  
Ու զասում ծփա  
Իշխ—Քահլայի սրտում...

Ջա՛ն,  
Ազրբեյջա՛ն,  
Եյ ջա՛ն,  
Ջահակի՛ր,  
Ջահե՛լ,  
Ջիվա՛ն,  
Կանգնել ես  
Արեվի դիվան  
Կրծքաբաց,  
Ալ կապած,  
Պարթեվ:  
Նոր Արեվելքին—Շարքին  
Վառում ես  
Ալ վառ հրդեհ.  
Հեգի ու մեգի հոգում  
Փռում ես  
Աստղեր հրթեվ...

2

Ջա՛ն,  
Ազրբեյջա՛ն,  
Եյ ջա՛ն,  
Քո Ֆաթիմային սալա՛մ,  
Վոր յերեսին  
Ել բող չունի՛,

Վոր շարիաթից  
Ել դող չունի՛:  
Վոր յեթե ցանկա,  
Ուզի—  
Կհուզի սրտերն իգիթ:  
Վոր հիմա  
Զի՛ դնում  
Հինա  
Մազերին,  
Ձեռքին,  
Խելքին...

Քո Ֆաթիմային՝ սալա՛մ:  
Քո Նաջիբային՝ սալա՛մ:  
Քո Եմինեյին՝ սալա՛մ:  
Սաբահ խե՛յր,  
Սալա՛մ  
Ու սե՛ր:

Իմ յերգը հարեմ չունի՛. —  
Հարեմի դուռն ե բանդում,  
Ուր հազար սրտեր կանաչ  
Խամրում են անող բանտում...

Իմ արեվ կրքում,  
Գրկում,  
Իմ կարմիր գրքում,  
Բաջի՛,  
Յեռում ե սերը շեմսի  
Յեվ կանչ  
Ու պայքար քաջի...



Հե՛յ,  
 Բաքո՛ւ,  
 Բաքո՛ւ,  
 Բաքո՛ւ,  
 Բա քու հորերը նավթի՞:  
 Ի՞նչ,  
 Սըր Քոքս կուզի զավթի՞,  
 Բո՞քս խաղալ կուզի բեզ հետ...  
 Ապա թող գործի,  
 Փործի,  
 Վոր զգա ուժը բոքսիդ...

Հե՛յ,  
 Բաքո՛ւ,  
 Բաքո՛ւ,  
 Բաքո՛ւ,  
 Բա քու ֆանտանները զարկող,  
 Բա քու հորերը սարքող  
 Ռաբոչի—իշխի—բանվոր—  
 Այն, վոր  
 խոր հորերդ ե փորում,  
 Այն, վոր  
 նոր որերդ ե բերում,  
 Բա ինչպե՞ս չասեմ նրան.  
 — Վա՛ր որ, ե՛յ, յուդա՛շ Հասան:  
 — Բարե՛վ բեզ, ընկե՛ր Սաքո:  
 — Զդարովո, տավա՛րիշչ Իվան:

Ջա՛ն,  
 Ազրբեյջա՛ն,

Ե՛յ ջա՛ն,  
 Իզիթ ես հիմի,  
 Ջահե՛ր,  
 Վառել ես  
 Բյուրամոմ ջահեր,  
 Վառել ես  
 Շող,  
 Շեմս-արեվ:  
 Ջա՛ն,  
 Ազրբեյջա՛ն,  
 Ե՛յ ջա՛ն,  
 Սաբահ խե՛յր,  
 Սալա՛մ,  
 Բարե՛վ:

1923—Թիֆլիս



## ՊՈԵՄ ՉԻՆԱԿԱՆ

L N S O U

**Տալի՛ Ծինկ,**  
Մանդարին Կառ Դիլի՛ աղջիկ,  
Լոտո՞ս ես դու:

Լոտոսը—  
Լուսաբացին ջրից բարձրանում,  
Լվացվում ե:

Կեսորին—  
Լոտոսն արեվի դեմ ժպտում,  
Բացվում ե:

Լոտոսը—  
Իրիկվան թագնվում ե ջրում,  
Գոցվում ե:

Լուսաբացին—  
Լոտոսի պես բացվեցիր դու:

Իրիկվան—  
Լոտոսի պես կգոցվես դու:

Իսկ ո՞ւր ե կեսորը,  
Տալի՛ Ծինկ:

Կինամոնի  
Յեվ թեվուկի անուշաբույր յուղերով  
Ոծվում ես:

Ձո՞ւր: <sup>է վառե</sup>  
Ձե՞ վոր <sup>վառե՞լ ես:</sup>  
Լոտոսի պես իրիկվան գոց <sup>առե՞լ ես:</sup>  
Անուշաբույր յուղերը

Քեզ արեվ տվող չե՛ն:

Նուրբ նազանքներդ  
Յերկար տեվող չե՛ն:

Ձե՞ վոր  
Կեսոր չունես դու,

Տալի՛ Ծինկ,  
Ձին մանդարին Կառ Դիլի՛ աղջիկ:

Կեսորվա արեվը վառ կրակ ե,—  
Գրանիտ հոգիները հուզում ե:  
Բանվոր մարդն ուզում ե  
Գրկի արեվձին կրքի աղջկան:

Իսկ դո՛ւ  
Վախե՛լ ես,  
Արեվիցը  
Փախե՛լ ես,  
Ե՛, Ե՛, Ե՛,  
Ձինմաչինի չինի չե՛ն աղջիկ:

Հայրդ  
Հարուստ մանդարինն ե Պեկինի:



Ունի թե գինի,  
Թե շարքաթ  
Ու խորտիկ,  
Զնգուն ստերլինգները— շա՛տ:  
Զնգուն վոսկիները դիզել ե  
Հազար հեռու Երբի զրկանքիցը.  
Նրան՝ զել ե:  
Ի.

Բյուրեղյա քյոշկումն ե պահում,  
Տայի՛ Ծինկ,  
Մանդարինի արեվազո՛ւրկ աղջիկ:

Քյոշկումը  
Որորվում ես որորով:  
Մեղկ փռված որերով  
Յերազում ես,  
Նուրբ ու մեղմ  
Նազում ես:  
Պերսին ծաղկի հոտն ես քաշում  
Յեվ հնգում,  
Հազում ես:  
Ու մաշում ես որորուն որերըդ,  
Տայի՛ Ծինկ,  
Մանդարին Կառ Դիի՛ աղջիկ:  
Վոսկիներն արեվի տապը չունեն:  
Վոսկիները մաշում են մարդուն:  
Իսկ արեվի շողերը մարդուն թրծում,  
Խաշում են:  
Մաշո՛ւմ են,  
Մաշո՛ւմ են,

Մաշո՛ւմ են  
Բյուրեղյա քյոշկերը մարդուն...

Ե՛, ե՛, ե՛,  
Զինմաչինի չինի չի՛ն աղջիկ,  
Արեվի դեմը մարմինդ վառե՞լ ես:  
Բրնձի ձիգ արտերը վարե՞լ ես:  
Պայքարումը խոր վերքեր առե՞լ ես:  
Հառե՞լ ես հայացքդ հեռվին հուր...

Չե՞,  
Չե՞,  
Զո՛ւր ..

Ե՛,  
Զինմաչինի չինի չի՛ն աղջիկ,  
Դու մի լոտոս եյիր լուսաբացին:

Իրիկվան—  
Լոտոսի պես կգոցվես լուռ:

Իսկ կեսորըդ  
Զի՛ լինի,  
Զի՛ լինի,  
Զի՛ լինի,  
Չե՛  
Ե՛,  
Զինմաչինի չինի չի՛ն աղջիկ:



Գիշեր:

Պեկինը գիշերում

Ոպիումի որորանք ե,

Պեկինը գիշերում

Դեղին ուլունքով որորան ե:

Պեկինը գիշերում

Որորում ե քեֆ քաշող քյոշկերը:

Որորում ե հոգնած կուլիի բունը:

Գիշեր:

Խավարը խառնել ե Պեկինի քարտեզը:

Պարտեզը Տայի Ծինկի

Խաղաղ ե,

Անծայն:

Յերկու ստվերներ անցան,

Ծաղկած ծառի տակ կանգ առին:

Մեկը

Ցաա՛ Ցին ե---

Տայի Ծինկի վարձու մակույկավարը:

Մյուսը

Ծիու կան ե---

Տայի Ծինկի պարտիզպանի աղջիկը:

Յեւ խոսում են նրանք բարձր:

--- Ծիու՛ կա,

Զինմաչինի չին չարքա՛շ աղջիկ,

Ծովի հորձանքների նման  
Հուզվե՛լ ես դու...

— Ցաա՛ Ցին,

Զինմաչինի չին չուգո՛ւն մանչ,

Հորձանուտ ծովերի խորքումը

Սուզվե՛լ ես դու...

Մանչն ասաց.

— Ծիու կա,

Հրակ ես,

Ճաճանչող երա՛գ ես,

Արեւի տա՛պ դու:

Աղջիկն ասաց.

— Ցաա՛ Ցին,

Քաղցր ես,

Խրոխտ ու բա՛րձր ես,

Կա՛րձր ես

Զուգունի չափ դու:

Լուսամուտիցը քյոշկի

Տայի Ծինկը լսում ե լարված.

Ասես,

Պինդ հարված տվին

Նրա սրտին վառված:

Խա՞նդն եր իր սիրտը խայթողը,  
ե՞:

Տայի Ծինկ,

Հարուստ մանդարինի՛ աղջիկ,



Պարտիզումդ  
Արեւավառ յերկու սրտեր կան,  
Մեկը  
Ցզա ծին ե—  
Վարձու մակույկավարդ.  
Մյուսը  
Ծիու հան ե—  
Պարտիզականիդ աղջիկը.  
Տայի՛ Ծինկ,  
Պարտիզումդ  
Արեւավառ յերկու սրտեր կան.  
Իսկ փորքա՛ն ցրտեր կան  
Քո սրտումը...

Նրանք  
Եսոր  
Կեսորվա արեւներ են արեւի դեմ.  
Կեսորվա արեւ են  
Զարթնող աշխարհի համար:

Յեւ նրանք  
Հազար են  
Ու ելի՛, ելի՛—  
Վոր կառուցել են բյուրեղը ձեր...  
Ու թե վրեժը նրանց կանչի  
— Յելի՛ր,—  
Կքանդեն ձեր աշխարհը ծեր...

Իսկ դու կեսոր չունե՛ս, չունե՛ս,  
Յերեկ ու եսոր չունե՛ս, չունե՛ս:

Իրիկունդ շուտով կգա՛, կգա՛,  
Մանդարին հառ Դիի հյուծված աղջիկ:

## Թ Ի Ա Վ Ա Ր Ը

Հուսաբաց:  
Պեկինը  
Արեւի բաղնիքումն ե:  
Քյոշկերը  
Վառվում են վոսկեշողով:  
Զիգ ու ծուռ փողոցներումը  
Աղմկում են կուլինները:

Տայի Ծինկը մակույկումն ե:  
Մակույկը— լճի վրա:  
Վարձու մակույկավար Ցզա ծին  
Թիավարում ե:  
Վարձու յե տվել իր բազուկը գույգ,  
Վոր որվա մեջ  
Կես անգամ խաշած բրինձ ծամի:

Ե՛,  
Ցզա՛ ծի,  
Հանդուգն թիավար,  
Ծփուն ծովերումն ել կլողաս դու:  
Բազուկներդ կուռ են ու թափով:

Թե հորձանուտ ծովերում  
Թիավարես դու,  
Տայի Ծինկը  
Մակույկումդ նստողը չի,—



Նա հարուստ մանդարինի  
Փխրուն աղջիկն է.  
Հորձանքիցը սոսկում է նա:  
Մարում է նա փորձանքիցը...

Կրժքիդ տակը տայֆունն է դղրդում,  
Ցասկոտ ծովերի կարոտն է հուզում քեզ.

Ե՛ր,  
Ցզա՛ Ցի,  
Հանդժժուն թիավար,  
Լճակը մի փոքր բաժակ է,  
Ահա՛ նրա հատակը,  
Կատա՛կ են մակույկն ու լիճը:  
Ափից ափը մի թռիչք է.  
Կատա՛կ է:

Իսկ կրժքիդ տակը  
Տայֆունն է դղրդում,—  
Արեվելքի ցասումը,  
Զինմաչինի  
Զարբաշ չիների  
Ազատության շառաչը...

Ե՛ր,  
Ցզա՛ Ցի,  
Հիշո՞ւմ ես,  
Նավաստի եյիր նավում շոգեվար:

Թռիչքդ ովկիանից ովկիանն էր,  
Թեվերդ՝ աշխարհից աշխարհ.

Որերիդ գարունը նրանցն էր,  
Վորոնք քամում եյին  
Զինմաչինի արյունը հորդ...

Ե՛ր,  
Ցզա՛ Ցի,  
Հիշո՞ւմ ես,  
Մի որ ել ծովափ նետեցին քեզ:  
Հեզ ու համր մարդ էր պետք նրանց,  
Իսկ կրժքիդ տակը  
Տայֆունն էր դղրդում. .  
Յեվ հիմի՛  
Վարձու յես տվել բազուկներդ զույգ,  
Վոր որվա մեջ  
Կես անգամ խաշած բրինձ ծամես ..

Ահա Տայի Ծինկը մակույկումը նստած՝  
Նայում է աչքովն իր բութ:  
Վարձու Ցզա Ցին  
Թիավարում է:  
Իսկ Տայի Ծինկը կրքից հեվում  
Ու մարում է:  
Հուզում է նրան վարձու ստրուկը...  
Աղջիկն ուզում է  
Զուլվի նրան,  
Սիրի,  
Տիրի...

Քսանհինգ տարու  
Արու յե իր ստրուկը,



Իսկ ինքը —  
Հասուն եգ,  
Սեգ  
Ու սիրուն տիրուհին նրա...

Վեր թռավ չար —  
Ձինմաչինի չինի չին ճկուն աղջիկը.

— Ե°,  
Ցաա՛ Ցի,  
Իմ վարձու ստրո՛ւկ դու,  
Այժմ ինձ վարձիր դու,  
Իմ տերը դարձիր դու:  
Գրկի՛ր ինձ,  
Պրկիր ինձ գրկումդ,  
Կրթումդ հալվեմ թող,  
Ե°:

Ցաա՛ Ցի,  
Կտամ ինչ վոր ուզես, —  
Բյուրեղյա բոշկա՛ քե՛զ.  
Մարջաններս ու փերուզներս՝ քե՛զ.  
Ցես ել լինեմ քեզ,  
Լինեմ հեզ  
Հարճի պես,  
Ե°:

— Տիրուհի՛,  
Թեվերս թո՛ղ,

Թո՛ղ,  
Վոր թիավարեմ յես:

— Ե°,  
Ցաա՛ Ցի,  
Արեվի արո՛ւ մանչ,  
Ի՛նչ,  
Ձինմաչինի  
Ձինի չին չքնաղ աղջիկը չե՛մ:  
Ե°:

Գրկի՛ր ինձ,  
Գրկիր ինձ,  
Ասա ինձ կեսն այն խոսքերի,  
Վոր ասում եյիր  
Պարտիզականիս աղջկանը բոբիկ:

— Տիրուհի՛,  
Թեվերս թո՛ղ,  
Թո՛ղ,  
Վոր թիավարեմ յես:

— Ե°,  
Ցաա՛ Ցի,  
Ցրտիցը դողում եմ յես,  
Սողում եմ ծնկերիդ մոտն ահա:  
Գրկիր ինձ բարկ գրկումդ.  
Սրտումդ սեր չկա՞ վոր,  
Ե°:



— Տիրուհի՛,  
Թեվերս թո՛ղ,  
Թո՛ղ,  
Վոր թիավարեմ յես:

Պեկինուժը  
Ջահել մանդարիններ չկա՞ն վոր—  
Ազնվացեղ,  
Հարուստ,  
Կրքոտ,  
Նրանց բամե՞լ ես վոնց վոր կիտրոն,  
Նրանց սերը սա՞ռն ե հիմի...

Իսկ յես  
Վարձու յեմ տվել քեզ բազուկներս միայն,  
Վոր որվա մեջ  
Կես անգամ խաշած բրինձ ծամեմ:

Տիրուհի՛,  
Թեվերս թո՛ղ,  
Թո՛ղ,  
Վոր թիավարեմ յես:

— Ցզա՛ Ցի,  
Թիերդ կրծքիս վրա վարիր,  
Մեջքիս շուրջը լարիր բազուկներդ,  
Լճակդ լինեմ յես,  
Ե՞՛:

— Տիրուհի՛,  
Թեվերս թո՛ղ,

Թո՛ղ,  
Վոր թիավարեմ յես:

Յես  
Որվա մեջ կես ժամ եմ սիրում նրան:  
Նա  
Որվա մեջ կես ժամ ե սիրում ինձ...  
Լուսաբացից մինչ արեվմուտը  
Մեր բազուկները վարձու յեն...

Լուսաբացից մինչ արեվմուտը  
Մեր սրտերն աշխարհի գալիքներին են.  
Մարդկային փոթորկվող ալիքներին են.  
Հողմերին  
Ու աշխարհի չորս կողմերին են.  
Մեր սրտերը  
Ազատատենչ բյուր սրտերին են...

Տիրուհի՛,  
Թեվերս թո՛ղ,  
Թո՛ղ,  
Վոր թիավարեմ յես:

Դու քնքուշ,  
Ուժատ  
Ու շատ նուրբ ես:  
Իսկ իմ հույզերը քանդող են:  
Անթո՛վ են քեզ իմ խուռն խոսքերը  
Ու ձեռներըս—կոպիտ:  
Մարջաններդ—քե՛զ:  
Փերուզներդ—քե՛զ:



Նրանք հատիկ-հատիկ արցունքից են,  
Կաթիլ-կաթիլ արյուն են նրանք...

Իմ սերը մարջանին չի,  
Իմ սերը վոսկուն չի,  
Բյուրեղյա բյուրեղին չի,  
Ցեա ծովի ու սովի սովոր մարդ եմ,  
Ինչի՞ս պետք մեռնող ու մաշված սերդ:  
Ե՞:

Տիրունի՛,  
Թեվերս թո՛ղ,  
Թո՛ղ,  
Վոր թիավարեմ յես:

L N S N U

Ոպիումը գերում է մարմինդ:  
Ոպիումը բերում է թմբիր:

Ոպիումը  
Որորո՞ւմ է,  
Որորո՞ւմ է,  
Որորո՞ւմ:  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր...

Ոպիումը թաղում է կրքերդ—  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր ..

Տայի Ծինկը ծխում է:  
Ծխում է ու հազում է:  
Ծխում ու յերազում է...  
Մահճի փափուկ բարձերը զրկած—  
Կրքից դողում է,  
Սողում է պորտի վրա:  
Ցերազում է:  
Քունը չի՛ գա,  
Քունը չի՛ գա:  
Չե՛,  
Քրտնքումը լողում  
Ու դողում է...  
Քունը չի՛ գա,  
Չե՛:  
Ե՞:

Քսանհինգ տարու  
Արու յե իր ստորուկը .  
Ե՞:

Ոպիումը քուն է բերում,  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր:

Գիշերվա մթնումը .  
Մի եգ շուն  
Նրա սրտումը վռնում է տրտում...

Գիշերվա մթնումը—  
Մի եգ շուն



Փողոցումը վռնում եւ տրտում,  
Մի հեգ շուն  
Դռան մոտը — ցրտում...

Ե՛ր,  
Տայի՛ Ծինկ,  
Հոգումդ ծմեռ ու ծյուն կա հիմի,  
Մահման հծծյուն կա հիմի:

Շան նման մեկը ներսդ վռնում ե  
— Ա ո՛ւ ո՛ւ ո՛ւ:  
Ե՞ր:

Լսեցի՞ր:

Հիմի կյանքը թվում ե քեզ  
Ձար ու չնչին.  
Զինմացինի չինի չի՛ն աղջիկ,  
Ձե՞ր,  
Հարուստ մանդարինների սերը  
Թվում ե չնչին...  
Սպասես ել ինչի՛ն.  
Տայի Ծի՛նկ,  
Բյուրեղյա քյոշկի թմրո՛ղ աղջիկ:

Տայի՛ Ծինկ,  
Մանդարին Կառ Դիի՛ աղջիկ,  
Մաղձոտ ու թախծոտ ես հիմի:

Ոպի՛ր՛ւմ ծխիր:  
Քո՛ւն մտիր:

Թմրի՛ր դու:

Լուսաբացին—  
Լոտոսի պես բացվեցիր դու:

Լոտոսի պես գոցվում ես—  
Իրիկունդ ե:

Իսկ արեվշող կեսորդ  
Չեկա՛վ,  
Չեկա՛վ:

Տայի՛ Ծինկ,  
Մանդարին Կառ Դիի՛  
Անարեվ ու պռռնի՛կ աղջիկ...

1924—ԹԻՓԻԽ



# Ռ Ա Մ Ռ Ո Յ

## 1

Հույզերիս հազարը քե՛զ տամ,  
 Յերգերիս հզորը քե՛զ տամ,  
 Գորշ կյանքիս երեկը բո՛նն եր,  
 Վառ կյանքիս եսորը քե՛զ տամ.  
 Յերկիր իմ, իմ հարազատ դու,  
 Զինմաչի՛ն, հուր Արեւելք դու,  
 Գիշերվա խավարը բո՛նն եր,  
 Արեւշեկ կեսորը քե՛զ տամ...

Իմ յերգը հույզերիդ մե՛ջն ե,  
 Շրջում ե խուռն շարքերո՛ւմդ,  
 Իմ յերգը պայթարիդ մե՛ջն ե,  
 Հնչում ե կուռ զարկերումդ.  
 Յերկիր իմ, իմ գովակա՛ն դու,  
 Հրձիգ դու, արեւածի՛ն դու,  
 Վորքա՛ն դեռ հրդեհնե՛ր կան  
 Հոգումդ, խոր ծալքերո՛ւմդ...  
 Վորքա՛ն դեռ զրնգուն յերգեր կան,  
 Վոր բարձր ու զի՛լ յերգես դու.

Վորքա՛ն դեռ ցավ ու վերքեր կան,  
 Վոր վաղը հպարտ հերքես դու,  
 Յերկիր իմ, արնահեղե՛ղ դու,  
 Տիտա՛ն դու, վորոտահո՛ւնչ դու,  
 Վորքա՛ն դեռ ծիգ փողոցնե՛ր կան,  
 Վոր ալ ու արնով ներկե՛ս դու...

Գալարվում եր երեկ սի՛ւրտըս՝  
 Ծանր ու խոր բո հառաչի՛ցը,  
 Իսկ այսոր, հե՛յ, յես հարբե՛լ եմ՝  
 Հաղթ ու զոռ բո շառաչի՛ցը...  
 Յերկիր իմ, զարթնած կուլի՛ դու,  
 Վրիժավառ, թնդացող ոռ՛ւմբ դու,  
 Յես բայլում եմ միլիոնի՛ հետ  
 Շարքերիդ մի՛շտ առաջի՛ցը...

## 2

Շանհայի փողոց:  
 Ամառ:  
 Կեսոր:

Գործադուլ:  
 Ցույց ե:  
 Ցնցում:

Հնձում ե  
 Գնդացիւն եսոր  
 Բանվորին,  
 Գյուղացուն  
 Ըմբոստ...



Զարթնել ե կուլին չարքաշ—

Քնիցը գերող ու խոր:

Զինմաչինը

Հուր ե

Հիմի,

Որերը — պայքար, ժխոր...

Զինը չնչին չի՝ հիմի.

Փշրվող ու նուրբ չինի չի:

Զինը

Հինը չի՝ հիմի.

Քնաբեր ու մեղկ գինի չի...

Շանհայի փողոցումն եսոր

Հորդում ե կյանքը բոցված:

Մռնչում ե առյուծը հզոր,

Սիրտը խոր ու խոր խոցված ..

Շարժվում են շարքերը փողոցով:

Ծով ե փողոցը յերթով:

Փռվել են դրոշներն ալ-հուր:

Փողոցը թնդում ե յերգով:

— Յելի՛ք,

Ում կյանքը տանջանքով լի յե,

Ով վոր բանվոր-կուլի յե,

Մեքենավար,

Նավաստի,

Դարբին,

Հնձող,

Առա՛ջ,

Առա՛ջ,

Առա՛ջ...

Բանկերը Լոնդոնի, Տոկիոյի—

Եսոր գնդակով են խոսում:

Շանհայի փողոցումն եսոր

Զիների արյունն ե հոսում...

Կանգնած հնդիկ զինվորներ հիսունմեկ՝

Դեմ առ դեմ շարքերի անանց,

Գնդակի յեն բռնում անխնա

Ծերերին,

Փոքրերին,

Կանանց...

Մի ջահել սպա սպիտակ,

Յեկած Լոնդոնից հեռավոր,

Հրաման ե տալիս կտրուկ.

— Կրա՛կ, անդադար կրա՛կ:

Մեկը հիսունմեկ զինվորից —

Ռամ Ռոյը՝ հնդիկ զինվոր,

Հրացանը ձեռքին բռնած

Կանգնել ե մտածկոտ ու լուռ:

Յեվ հենց այդ դաժան ժամին

Թռչում ե Շանհայից հեռո՛ւ

Խոհուն միտքը Ռամ Ռոյի,

Ռամ Ռոյի հոգին յեռուն:—



Հեյ հեյ,  
Հեռավոր Հինդում,  
Բիխուրի գավառում փոքրիկ,  
Հայրենի գյուղն ե չերեւում,—  
Գյո'ւղը աշխատող ու սոված,  
Յեւ ահա գյուղի վերեւում,  
Գանգեսի ափին կալած  
Յեղեգնյա խրճիթը Ռամ Ռոյի,—  
Տկոյր Փաքիրի նման  
Իր բախտին կամ մահման սպասող...

Ռամ Ռոյը տեսնում ե կարծես,  
Կարծես տեսնում ե,—

Ահա՛

Չոր խարի վրա պառկած  
Իր կինը հյուծված յեւ հիվանդ:  
Յերկու մանչուկներ մատղաշ  
Նստել են հեվքոտ մոր կողքին,  
Յեւ ինչպե՞ս,  
Ինչպե՞ս ուզեն  
Մայրիկից մի պատառ չոր հաց...

Ամեն առավոտ-իրիկուն,  
Կարոտով,  
Կակիծով մանկական՝  
Հիշում են իրենց հորը —  
Ռամ Ռոյին,  
Հիշում են կարոտով  
Ու լալիս:  
Ու հարց են տալիս անվերջ

Մահամերձ յեւ անհար մայրիկին.  
— Մա'յր,  
Ո՞ւր ե,  
Ո՞ւր ե հայրը մեր.  
Ինչե՞,  
Եւ ինչե՞ չի գալիս...

Ե՛ւ,  
Ռամ Ռոյը ինչպե՞ս չիշի,—  
Թե քանի միստեր ու սիր  
Հինդը շինել են մի խսիր  
Ու նստած քեֆ են քաշում...  
Յեսիր ե Հինդը հիմի,  
Շղթայված,  
Իր կյանքն ե մաշում...

Ա՛խ,  
Ռամ Ռոյը միթե չգիտի՞,  
Վոր քանի՞ միա ու ռաջա  
Խեղդում են դաժան թափով,  
Խեղդում են խալիսին անհար...  
Միստերը,  
Միան  
Ու ռաջան  
Քամում են քրտինքը խեղճի,  
Տանում են,  
Գողանում անձայն  
Խեղճի շապիկը վերջին...



Ե՛խ,

Ռա՛մ Ռոյը ինչպե՞ս չհիշի,—  
Թե քանի՛, քանի՛ անգամ  
Դրել են զնդացիք մահաբեր  
Չարքաշ հին Հինդի սրտին...  
Յե՛վ քանի՛ բանվոր-գյուղացի  
Ընկել են զնդակիցը խոցող...  
Ու դեռ քանի՛սը կընկնեն  
Սրտերը վրեժի բոցով...

Ռա՛մ Ռոյ,

Հե՛յ,

Հնդի՛կ զինվոր,  
Տերդ անաշխատ,  
Դաժան՝

Յերկրումդ քեզ գերեց,  
Քեզ Շահհայ բերեց,  
Ինչի՞,—

Վոր յերբ Ձինի կանչը հնչի,  
Յերբ թնդա սիրտը Ձինի,  
Ձինի՛ ըեզ,  
Դահիճ շինի,  
Ու հրաման տա.  
— Առա՛ջ,  
Կրա՛կ...

Ռա՛մ Ռոյ,

Հե՛յ,

Հնդի՛կ զինվոր,  
Կրակե՞ս դու պիտի,  
Կրակես չարքաշ չինների վրա՞...

5

Թռչում են զնդակները կարկուտ  
Դեպի շարքերը չինների...  
Ձինմաչինը յերբեք չի՛ ների  
Սպանդն այդ դաժան յե՛վ անգուլթ..

Ձինմաչինը յերբեք չի՛ ների  
Դահիճն դավադիր ու դաժան,  
Վոր ըմբոստ, չարքաշ չինների  
Արյունը թափեց փողոցում...

Գնդակները նորից են թռչում  
Ուղիղ,  
Անվրեպ,  
Համազարկ:  
Ձինների շարքերը՝ անգեն,  
Բայց լքում չկա.  
Ձի՛ լինի:

Թող տեղա կրակ մահատու,  
Թող հնձի հազարը եսոր,  
Բայց կզան նորերը հատու,  
Վրեժով վառված ու հզոր...

Գնդակները թնդում են անկանգ,  
Գնդացիքը հուր ե ցանում...  
Հնդիկ զինվորները անկամք  
Շարքերիցը հունձք են անում...



Ահա ուսանող մի ջահել—  
Փռվել ե փողոսմը, գետին.  
Յեվ բերում ե հողն արնաներկ,  
Հեվում ե շնչովն իր հետին:

Ընկավ մի կուլի վերք առած,  
Գլխիցը արյուն ե հոսում.  
Հայացքը հեռուները հառած,  
Ինչ-վոր զառանցում ե, խոսում:

Մի տաս տարեկան չին տղա,  
Կիսամերկ, բոբիկ, նուշ աչքով,  
Սեղմած բռունցքները փոքրիկ,  
Կանգնել ե բանվոր հոր կողքին:  
Յեվ հանկարծ գնդակ մի բոցված—  
Ծակեց խոր կուրծքը չին տղի.  
Ընկավ նա կրծքիցը խոցված,  
Ճչալով նվաղ.  
— Ա՛ա՛ա՛խ, հայրի՛ի՛ի՛կ...

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:  
Յեվ թվաց նրան, վոր իրավ,  
Իր մանկիկն եր նա հարազատ—  
Ընկավ վիրավոր ու մեռավ...

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:  
Հիշեց հայրենիքն իր Հինդ—  
Պինդ շղթաներով շղթայված...

Հիշեց մանկիկներն իր անտեր,  
Վոր գուցե մեռել են բաղցից...

Յեվ կամ հենց գուցե այդ ժամին—  
Նրանք ել ընկան արնաքամ...

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:  
Աչքիցը կայծեր են հորդում:  
Կարծես, այն փոքրիկ չին տղան  
Այնպե՛ս նման եր իր վորդուն...

Կարծես այն փոքրիկ չին տղան  
Այնպե՛ս նման եր իր վորդուն...  
Իր վորդու սրտիցն ե, կարծես,  
Ալ կարմիր արյունը հորդում...

Յեվ ահա սրտումը Ռամ Ռոյի  
Ճչում ե սուր ձայն մի ծանոթ,  
Կարծես իր մանկան ճիչն ե այն.  
— Ա՛ա՛խ, հայրի՛ի՛ի՛կ,  
Ամո՛թ քեզ, ամո՛ռ ո՛ր...  
—

Ռամ Ռոյը ցավիցը ցնցվեց:  
Ինչ-վոր բիրտ ձեռք առնական  
Պոկում ե իր սիրտը տեղից..

Ռամ Ռոյը ցավիցը ցնցվեց:  
Յեվ հանկարծ թափով վեռական  
Կանգնեց ուղղածիզ, լուռ յեվ սեզ—  
Շարքերի առաջ հնդկական.  
Ու կանչեց խրոխտ, բարձրականչ.  
— Հե՛յ,  
Հնդի՛կ զինվորներ,  
Ի՛նձ լսեք,



Լսե՛ք,  
Յեղբայրնե՛ր իմ անգիտ,  
Կա՛նգ առեք,  
Ել մի՛ կրակեք ձեր յեղբայրների վրա,  
Ձեր վորդիների,  
Քույրերի  
Ու ձեր հայրերի վրա...  
Սհա կանգնել եմ յես անվախ,  
Կրծքաբաց կանգնել եմ ձեր առաջ...  
Ու յես կմեռնեմ անհատաչ—  
Թե վոր գնդակները ձեր թեժ  
Խրվեն կրծքումս կարծրակուռ...  
Ձե՛ր,  
Կրակողը չե՛մ յես յերբեք  
Չարքաշ չինների վրա...  
Վրեժիցը մեր մահաբեր  
Դողա թող սպան մեր դաժան...  
Թող մեր գնդակներն անվրեպ  
Սուլեն յեվ թռչեն յեվ խոցեն  
Կրծքերը մեր բիրտ տերերի...  
Ձե՛ր,  
Կրակողը չեմ յես յերբեք  
Չարքաշ չինների վրա...  
Շփոթ ե տիրել շարքերին:  
Հիսուն զինվորները հնդիկ—  
Կանգնել են անշարժ ու մռայլ:  
Հնչեց հրամանը սպայի.  
— Գնդակել նրան,  
Կրա՛կ:

Հիսուն զինվորները հնդիկ—  
Կանգնել են անշարժ ու մռայլ:  
Հրամանը նորի՛ց ու նորի՛ց.  
— Լսո՞ւմ եք, պատ-րա՛ստ, կրա՛կ:  
Հիսուն զինվորները հնդիկ—  
Կանգնել են անշարժ ու մռայլ:  
Դողում ե խուլ ծայնն սպայի.  
— Հե՛յ,  
Դո՛ւք,  
Ձինվորնե՛ր հնդկացի,  
Հիշեցեք,  
Հինդում հեռավոր  
Ձեռքումս պատանդ եք թողել  
Ձեր հայրերը ձեր ու վորդիք...  
Լսո՞ւմ եք,  
Կրկնում եմ,  
Կրա՛կ:  
Պարզվեցին հրացանները հիսուն  
Դեպի կուռ կուրծքը Ռամ Ռոյի:  
Հրամանը համառ վորոտաց:  
Յեվ հրացաններիցը հիսուն  
Սուլեց զիւ  
Միայն  
Հինգ  
Գնդակ...  
Որորվեց Ռամ Ռոյը գունատ:  
Մահամերձ փուվեց չոր գետնին:  
Դեմքին դողում ե դառն ժպիտ:



Իջան հրացանները հիսուն:  
Հիսուն զինվորները հնդիկ—  
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Յեվ ընկավ Ռամ Ռոյը գունատ:  
Մահամերձ փովել ե գետին:  
Դեմքին դեռ դողում ե ժպիտ:

Ձեռքը պինդ սեղմած խոր վերքին,  
Սողում ե առաջ ու առաջ  
Դեպի շարքերը չիների:  
Սողում ե,  
Հեվում  
Ու նորի'ց:  
Դողում ե,  
Հեվում  
Ու նորի'ց...

Շարքերի մոտը չիների  
Փողոցի փողումը պառկած  
Խամրել ե փոքրիկ չին տղան,  
Վոնց վոր մի ծաղիկ տրորված,  
Յեվ վիշտը սառել ե դեմքին:

Ռամ Ռոյը ժպտով դառնազին  
Սողում ե առաջ ու առաջ  
Դեպի չին տղան մահացած:  
Սողում ե,  
Հեվում  
Ու նորի'ց:

Դողում ե,  
Հեվում  
Ու նորի'ց.

Լուռ ե: Հրացանները՝ անձայն:  
Հիսուն զինվորները հնդիկ—  
Կանգնել են տխուր ու մռայլ...

Յեվ ահա Ռամ Ռոյը հնդիկ—  
Դրկեց կարոտով չին տղին,  
Ինչպես իր վորդուն հարազատ.  
Կարծես շնջում ե կամաց.  
— Յես յեվ դու ընկանք այս կովում,  
Վոր Ձինը լինի մի'շտ ազատ.

Ավելի հզոր ե հիմի  
Թափը թնդացող շարքերի...  
Բյուր սրտեր ծուլված են հիմի...  
Լսում եք ծայրը զարկերի...

Ավելի խրոխտ ե հնչում  
Հիմի կանչը գոռ չիների.  
— Ո՛ր, Ձինը յերբեք չի՝ ների  
Դահհին դավադիր ու դաժան,  
Վոր քանի՜ չարքաշ չիների  
Արյունը թափեց փողոցում...

Ավելի խրոխտ ե հնչում  
Հիմի ռազմերգը չիների.  
— Յելե՛ք,  
Ում կյանքը տանջանքով լի յե,



Ով վոր բանվոր-կուլի յե,  
Մերենավար,  
Նավաստի,  
Դարբին,  
Հնձող,  
Առա՛ջ,  
Առա՛ջ,  
Առա՛ջ...

Ինչպես հայր-վորդի հարազատ -  
Ռամ Ռոյը՝ զինվորը հնդիկ,  
Ու տաս տարեկան չին տղան—  
Գրկել են իրար անբաժան ..

1925—Մոսկվա



## ՍԱԼՍՄ ԱԼԵՔ ԲՈՒՄ

1

Հե՛յ,  
Արեվելքի մոնչացող ալամ,  
Սալամ քեզ:

Այն ո՞վ ե,  
Վոր ինձ ծայնուլ ե.  
— Յերգի՛ր...

Այն ո՞վ ե,  
Վոր հազարական ծայնուլ ե.—  
Յզան Յին,  
Հակոն,  
Հասան,  
Նոր մարդը—մասսան.  
Բանվոր մասսան—ալամը,  
Նոր մարդուն—ալամին—  
Սալամ:

Հե՛յ,  
Արեվելքի զարթնո՛ղ ալամ,



Հուզեցիր ինձ:  
Ուզեցիր, վոր յերգեմ քեզ:  
Ուզեցիր վոր հինը հերքեմ յես...

Հե՛յ,  
Արեվելքի մոնչացո՛ղ ալամ,  
Պայքարիդ ծփանքը տեսել եմ,  
Յե՛ս ել եմ,  
Յե՛ս ել,  
Յե՛ս ել եմ ծփում...

Արեվե՛լք,  
Քեզ ցանցում են  
Ձույզ յերկաթգծերը.  
Ուղտապան ծերը  
Կմեռնի՛,  
Մեռնի՛ թող...

Լոնդոնի վոսկենորթը չգիտի՞,  
Վոր վորքան ցանցում են քեզ.  
Այնքան ցնցում ե քեզ,  
Վոր վաղը ցնծաս դու...

Քո շոգեկանչին վաղվա,  
Քո զորակոչին վաղվա,  
Քո լուսաբացին՝  
Նվեր իմ դալամը:

Հե՛յ,  
Արեվելքի մոնչացո՛ղ ալամ,  
Սալամ քեզ:

Սալամ ալե՛ք բում, Արեվե՛լք,  
Քո նոր շայրից բարե՛վ քեզ,  
Նորի՛ց ու նորի՛ց ու նորի՛ց  
Հրաշո՛ւնչ յերգ ու արե՛վ քեզ:

Ձե՞ վոր վորդիդ եմ— քո ցեղե՛ն,  
Բոցեղեն մա՛յր իմ Արեվելք.  
Յերեկ— դու գերի կուռքերի,  
Այսօր— շառաչող Արեվե՛լք...

Վորպես ուզմականչ ու ցասում —  
Ասում եմ յերգեր գարթոնքիդ.  
Ու թող աշխարհի հինգ մասում  
Գովքըդ ղողանջի, Արեվե՛լք...

Սալամ վաղվա վառ որերիդ.  
Սալամ պայքարիդ հրեղեն.  
Սալամ մարտնչող նորերիդ.  
Սալամ քեզ նորի՛ց ու նորի՛ց:

Սալամ ալե՛ք բում, Արեվե՛լք:

1921 — Մոսկու





# Յ Ա Ն Կ

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

|                                  |    |
|----------------------------------|----|
| Յերգ իմ . . . . .                | 62 |
| Ամենուր . . . . .                | 5  |
| Դիկտատոր . . . . .               | 7  |
| Քանակեց կոմմունարներին . . . . . | 9  |
| Փոքրիկ լրագրավաճառ . . . . .     | 14 |
| Ջանգճար . . . . .                | 17 |
| Յերկան . . . . .                 | 19 |
| Աշնան տերևի նման . . . . .       | 22 |
| Ժամացույցը . . . . .             | 25 |
| Մանչուկ . . . . .                | 28 |
| Շոգեկառք . . . . .               | 31 |
| Մալխական . . . . .               | 35 |
| Հ.Ս.Պ.Հ. . . . .                 | 38 |
| Արտելը . . . . .                 | 45 |
| Ջան, Սալեռի յերկիր . . . . .     | 47 |
| Լենին . . . . .                  | 49 |
| Մենք . . . . .                   | 52 |
|                                  | 58 |

## ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

|                       |    |
|-----------------------|----|
| Ջան, Արևելք . . . . . | 61 |
| Իմ յերգը . . . . .    | 63 |



|                             |     |
|-----------------------------|-----|
|                             | 62  |
| Լսիր, իմ ընկեր . . . . .    | 68  |
| Ուղտ . . . . .              | 75  |
| Յերկու սեր . . . . .        | 80  |
| Սթամբուլ . . . . .          | 86  |
| Կալկաթա . . . . .           | 88  |
| Բոմպեյ . . . . .            | 91  |
| Իրաննամե . . . . .          | 97  |
| Էռստանափորդներ . . . . .    | 101 |
| Արևելքի փողոցում . . . . .  | 105 |
| ✕ Դերվիշը . . . . .         | 110 |
| ✕ Դրախտ . . . . .           | 116 |
| ✕ Ծովը . . . . .            | 122 |
| Հարեմից դուրս . . . . .     | 126 |
| ✕ Ազրբեյջան . . . . .       | 128 |
| Պոեմ չինական . . . . .      | 134 |
| Ռամ Ռոյ . . . . .           | 152 |
| ✕ Մալամ ալիք քում . . . . . | 167 |





«Ազգային գրադարան»



NL0368908



57644